10.57192/18291864-2024.4-58

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԻ ԻՄԱՍՏՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Պատմաբանի կոգնիտիվ գործառույթների համատեքստում*

Բանալի բառեր – պատմական փաստ, սկզբնաղբյուր, պատմաբան, ժամանակ, արժևորում, ճշմարտություն, Մայիս 28, գիտական մոտեցում, մեթոդաբանություն, Լ. Ռանկե, Ի. Դրոզեն, Մ. Բլոկ, կեղծիք, գործոն:

1. Հասկացության սահմանումը

Ամեն մի գիտական աշխատանք սկսվում է փաստի հայտնաբերումից. սա վերաբերում է նաև **պատմական փաստին**, որը պատմագիտական հետազոտության հիմքն է: Այն ծագում է լատ. **factum** (գործ, գործողություն) բառից:

«Պատմական փաստ» հասկացությունը էվոլյուցիա է ապրել՝ Անտիկ դարաշրջանի պատմիչներ Հերոդոտոսից, Քսենոփոնից, Թուկիդիդեսից, Պոլիբիուսից, Պլուտարքոսից մինչև մեր օրերը: Նրանք պատմական փաստի հանդեպ իրենց նոր սկզբնավորվող մեթոդաբանական մոտեցումների միջոցով փորձել են ներկայացնել անցյալի կամ իրենց ժամանակակից իրական ու ճշմարիտ, իսկ երբեմն նաև՝ առասպելախառն պատմությունը: Հասկանալի է, որ վերջինիս պարագայում դժվար է խոսել պատմական փաստի ճշմարտացի լինելու մասին: Հին Հունաստանի և Հին Հռոմի պատմիչները իրենց ժամանակի մեջ հստակ պատկերացում չեն ունեցել պատմական նյութերի վերաբերյալ և փորձել են տարբեր մոտեցումներով ու մեթոդներով մեկնաբանել դրանք:

---

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11. 2024:

Այսպես, եթե Հերոդոտոսը պատմական փաստերը ներկայացնելիս ի-րեն «պարտավորված էր համարում հաղորդել այն ամենը, ինչ պատ-մում են»[1], ապա Թուկիտիդեսը և Պոլիբիուսը պատմական նյութերի հանդեպ ցուցաբերել են քննական մոտեցումներ, աշխատել են իրա-դարձությունները ներկայացնել հնարավորինս օբյեկտիվ ու ստույգ: Ըստ Թուկիտիդեսի՝ ամեն մի պատմական համարվող փաստ կամ փաստաթուղթ չէ, որ կարելի է դիտել որպես ճշմարտության արտացո-լում[2]: Իսկ ահա Պոլիբիուսը, ով հայտնի էր 40 գրքերից կազմված իր «-Համընդհանուր պատմություն»[3] եռահատոր արժեքավոր աշխատութ-յամբ, քննադատաբար է մոտեցել սկզբնաղբյուրներին և միշտ չէ, որ վստահել է իր «ականջներին» ու փաստորեն սկիզբ է դրել «քննական պատմություն» հասկացությանը՝ պատմագրության միակ չափանիշը համարելով ճշմարտությունը[4]:

Հետագա դարերում պատմական փաստերի և նյութերի վերա-բերյալ իմաստային ու բովանդակային ընկալումներն ու գիտելիքները զարգացում ստացան միայն Վերածննդի, Ռեֆորմացիայի ու Լուսավո-րության դարաշրջաններում:

Պոզիտիվիզմի փիլիսոփայական ուղղության հիմնադիր **Օգ-յուստ Կոնտը** (1798–1857) կարծում էր, որ փաստերն առհասարակ, ան-կախ դրանց թվաքանակից, հում նյութ են գիտության համար[5]: Մինչ-դեռ նրանից մեկ դար անց ֆրանսիացի ականավոր պատմաբան **Մարկ Բլոկը** (1886–1844), հղում կատարելով **Դենի Ֆյուստել դը Կուլանժի** (1830–1889) մտքերին, նշում էր՝ «Պատմությունը անցյալում կատարված փաստերի կուտակում չէ: Այն գիտություն է մարդկային հասարակութ-յունների մասին»[6]:

---

[1] **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1986, գիրք VII, գլ. 152, էջ 432:

[2] Տե՛ս **Фукидид**, История, отв. ред**. Я. Боровский**, кн. I, гл. 22, Ленинград, изд. «Наука», 1981, էջ 13-14:

[3] **Полибий**, Всеобщая история в сорока книгах (перевод с греческого **Ф. Г. Мищенко**), т. I, кн. I-V, М., изд. **А. Кузнецова**, 1890, т. II, кн. VI-XXV, М., 1895, т. III, кн. XXVI-XL, М., 1899.

[4] Տե՛ս **Полибий**, Всеобщая история в сорока книгах, т. I, кн. II, гл. 56, с. 198, т. II, кн.XII, гл. 27, էջ 396:

[5] Տե՛ս **Конт Огюст**, Дух позитивной философии (слово о положительном мышлении), перевод **И. А. Шапиро**, СПб., изд. «Вестника Знания», 1910, էջ 19:

[6] **Блок М.**, Апология истории или ремесло историка, перевод Лысенко Е. М., М., изд. «Наука», 1973, էջ 114.

Պատմական փաստի ընկալման տեսական ու մեթոդաբանական գործիքակազմերով են կատարվում պատմական իրադարձությունների քննություն-վերլուծությունները, մշակվում են հայեցակարգեր, ձեռք են բերվում պատմության ուսանելի փորձն ու դասերը: Պատմական փաստն **անկրկնելի է**: Առանց պատմական փաստի՝ պատմության ու պատմագիտության գոյությունը հնարավոր չէ, ինչպես որ առանց ատոմի՝ ֆիզիկան կամ քիմիան, առանց բջջի՝ կենսաբանությունը, առանց բառի՝ լեզվաբանությունը, առանց հողի՝ երկրագործությունը, առանց շինանյութի՝ շինարարությունը և այլն:

«**Պատմական փաստ**» **հասկացությունն իր էմպիրիկ իմաստով ենթադրում է անցյալում տեղի ունեցած, որոշակի իմաստ պարունակող ինչ-որ իրադարձություն, գործողություն կամ երևույթ:** Պատմական փաստը պատմության խոսուն վկան է: Փաստերը լինում են երկու տեսակի. մեկը՝ նշանակում է **էմպիրիկ** (փորձառական) **փաստ**, այսինքն՝ կատարված ինչ-որ իրական գործողության արձանագրում, իսկ երկրորդը՝ «**գիտական կամ՝ գիտապատմական փաստ**», այսինքն՝ առաջինից «քամված» գիտելիքի այն տարրը, մակարդակը, որի օգնությամբ նկարագրվում ու բացահայտվում է իրականությունն իր կիրառական նշանակությամբ:

Ուրեմն առաջինը անցյալի վերաբերյալ որևէ տեղեկույթի արձանագրումն է, իսկ երկրորդը՝ տվյալ փաստի արդեն իմաստավորված, պատճառահետևանքային կապով ձևակերպումը՝ պատմաբանի գիտահետազոտական աշխատանոցում, որն ընթերցողին որոշակի բովանդակությամբ ու պաշարով պատկերացում և գիտելիք է տալիս այս կամ այն իրադարձության ու երևույթի գործառնության մասին: Բացի այդ, եթե պատմական հանդիսացող փաստը ժամանակի ընթացքում որևէ փոփոխության (դեֆորմացիայի) չի ենթարկվում, ապա այն ստանում է մնայուն գիտական փաստի իմաստ ու բովանդակություն: Այսպես, օրինակ, 1918 թ. մայիսի 28-ի Հայաստանի անկախության պատմական փաստը առավել ևս գիտական փաստ է, քանզի այդ ճակատագրական իրադարձության ավելի քան մեկդարյա անցյալը գալիս է վերահաստատելու նրա՝ իբրև իրականության, անբեկանելի լինելու հանգամանքը:

Որևէ միայնակ կամ բացահայտ փաստը դեռ ոչինչ չի նշանակում, գիտապատմական կշիռ չունի: Ամենից առաջ այն պիտի վստահելի լինի և պատճառահետևանքային փոխադարձ կապի ու հարաբերությունների մեջ լինի նրան հարակից իրադարձության կամ երևույթի

հետ: Պատմական փաստերը իրար հետ փոխկապակցված են, ուստի կոնտեքստից կտրված փաստը չի համարվում պատմական: Բացի այդ՝ պատմական փաստը պիտի ունենա որոշակի գործառույթ տվյալ երկրի, ժողովրդի, հասարակության, պետության համար, և, որպես կանոն, որոշակի հետք թողնի ու նպաստ բերի մարդկության առաջընթացի ու զարգացման մեջ: Պատմական փաստի միջոցով է միայն հնարավոր պատմական ընդհանրացումներ կատարել և օրինաչափություններ բացահայտել:

Մյուս կողմից՝ ամեն մի պատմական համարվող **փաստ** չէ, որ կարելի է դիտել որպես ճշմարտության արտացոլում, և այն ընդունել, ինչպես ասում են՝ «հալած յուղի տեղ»: Դարձյալ նկատենք, որ պատմական համարվող փաստը, առանձին վերցված, դեռ կշիռ չունի, և դրա սոսկ արձանագրումը բնականաբար չի կարելի համարել (դիտել) որպես պատմություն: Ֆրանսիացի մեծ պատմաբան **Լուսյեն Ֆեբրը** (1878–1956) խոսելով պատմական փաստերի մասին՝ նշում է. «Մենք գիտենք, որ փաստերը, որոնց առջև մեզ կոչ են անում խոնարհվել, ինքնըստինքյան հանդիսանում են **աբստրակցիաներ** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[7]: Այդ նույն միտքն է վերարտադրել խորհրդային պատմաբան ու մեթոդաբան **Ա. Գուրևիչը**, ով բովանդակային, ժամանակային ու տարածական համատեքստից կտրված պատմական մերկ փաստը համարում էր սոսկ աբստրակցիա (վերացարկում)[8]: Անհրաժեշտ կարողունակությամբ օժտված անաչառ պատմաբանը ամենից առաջ պիտի կարողանա պատմական փաստը դնել գործողության մեջ, իմաստավորել այն պատմական իրադարձության **ժամանակային** ու **տարածական** համալիրի մեջ՝ համապատասխան մեթոդաբանական գործիքակազմով, այլ փաստերի, նյութերի և իրողությունների համադրման ու քննության միջոցով, որը վերջնարդյունքում կստանա ուսումնասիրվող հիմնահարցի ճշմարիտ իմաստ պարունակող պատասխանը:

Պատմական փաստն իր ձևի, կառուցվածքի և բովանդակության առումներով անկրկնելի է, սակայն նա կարող է որոշ ընդհանրություն ու նմանություն ունենալ մեկ ուրիշ ժամանակատարածական տիրույթում արձանագրված այլ փաստի հետ, որովհետև տվյալ ժամանակի մեջ գործող անհատը, անձինք կամ կառույցը հանգամանքների հրամայականով կարող են նախկին փաստ–որոշմանը կամ գործողությանը

[7] **Февр Л.**, Бои за историю, М., изд., «Наука», 1991, с. 28.

[8] Տե՛ս **Гуревич А. Я**. Что такое исторический факт? М., «Наука», 1969, с. 82 (в кн. «Источниковедение. Теоретическиметодологические проблемы», М., «Գիտություն», 1969).

նմանվող այլ փաստեր հրապարակ բերել: Բացի այդ՝ պատմական միևնույն փաստը, որոշակի քաղաքական, սուբյեկտիվ կամ այլ հանգամանքով պայմանավորված, կարող է այլ կերպ մեկնաբանվել ու գնահատվել: Ուստի պատմական իրադարձությունների վերաբերյալ կարող է լինել փաստ-տեղեկությունների առատություն, կարծիքների բազմազանություն (պլյուրալիզմ), սակայն պատմական ճշմարտությունը միայն **մեկն է**:

Բերենք օրինակ. 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության արդյունքում կնքված դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի փաստը պատմական գրականության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվել: Պատմական այդ փաստի վերաբերյալ ՀՀ կառավարության պաշտոնական եզրակացությունն ու գնահատականը տրված է մեկ ձևով. այդ օրերին նոր իշխանության եկած Հայհեղկոմի գնահատականը՝ բոլորովին այլ է, թուրքական զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայինը՝ այլ, իսկ այդ պատմափուլում զանազան ականատեսների և հուշագիրների նկարագրածը կարող է էապես տարբերվել իրարից և այլն: Բայց այդ պատմական փաստ՝ որպես եղելություն, այն է, ինչը ամփոփված է 1920 թ. դեկտեմբերի 2-ի գիշերը Ալեքսանդրապոլում կնքված Խատիսյան-Կարաբեքիր պայմանագրում: Նրանում արձանագրված են թուրք-հայկական պատերազմում ՀՀ բանակի ծանր պարտության արդյունքները և դրա հետևանքով ամենից առաջ հայկական տարածքների զգալի մասի բռնազավթումը Թուրքիայի կողմից, այնուհետև՝ Հայաստանի կողմից Սևրի պայմանագրից հրաժարումը, հայ-թուրքական սահմանագծումը և այլն: Պատմական մյուս վավերական փաստն այն է, որ այդ նույն օրը՝ դեկտեմբերի 2-ի կեսօրին, Երևանում ստորագրվել է Դրո-Լեգրան համաձայնագիրը, որով Հայաստանը հայտարարվում էր «Անկախ Սոցիալիստական Հանրապետություն», իսկ Ս. Վրացյանի գլխավորած կառավարությունը կամավոր հրաժարվում էր իշխանությունից, և Հայաստանը խաղաղ ճանապարհով խորհրդայնացվում էր: Բայց մինչև Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ) կժամաներ Երևան, ամբողջ իշխանությունը ժամանակավորապես (գործնականում մինչև դեկտեմբերի 4-ը) հանձնվում էր գեներալ **Դրոյի** (**Դրաստամատ Կանայանի** - 1884-1956) գլխավորած հայկական զինվորական հրամանատարությանը: Սրանք են պատմական եղելությունն ու գիտական ճշմարտությունը:

Մինչդեռ Հայհեղկոմը նախքան այդ՝ նոյեմբերի 29-ին, պատմական մեկ այլ փաստաթուղթ (հրովարտակ) էր հրապարակել, թե իբր

Հայաստանը խորհրդայնացել է նոյեմբերի 29-ին, այն էլ՝ իբր թե զինված ապստամբության (հեղափոխության) միջոցով, ուստիև 70 տարի մեզանում այդ օրը նշվել է որպես Հայաստանի խորհրդայնացման օր, և սա այն պարագայում, երբ Հայհեղկոմն ու նրան ուղեկցող Կարմիր բանակը նոյեմբերի 29-ին դեռ եղել են Հայաստանի սահմանագլխին՝ Ղազախում: Բայց ինչպես նշվեց, իրականում պատմական փաստն ու ճշմարտությունն այն է, որ Հայաստանի խորհրդայնացման սկիզբը պաշտոնապես համարվում է 1920 թ. դեկտեմբերի 2-ի կեսօրին Երևանում կնքված Դրո-Լեգրան 8-կետանոց համաձայնագիրը (ակտը), որով Հայաստանի կառավարությունը, այլընտրանք չունենալով ստեղծված բարդ իրավիճակում, իշխանությունը խաղաղ ճանապարհով փոխանցել է Հայհեղկոմին[9]:

Ավելին, խորհրդային պատմագրության մեջ, քաղաքական-քարոզչական նկատառումներով, պատմական փաստերի աղավաղումկեղծիքները հասել են այնտեղ, որ Ալեքսանդրապոլի Հայաստան--Թուրքիա **18** հոդվածներից բաղկացած հաշտության պայմանագիրը ներկայացվել է որպես **14** հոդվածանոց՝ շրջանցելով դրանում առկա Հայաստանի ու հայ ժողովրդի համար քիչ թե շատ տանելի մի քանի հոդվածներ[10]: Ընդ որում՝ դա կատարվել է ոչ միայն խորհրդային մենագրական բնույթի աշխատություններում, այլ նաև այդ և հետագա շրջանում կազմված փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում: Գիտական բարեխղճության առումով սա ուղղակի անթույլատրելի է, քանզի հատկապես միջազգային բնույթի ու կարևորության պայմանագիրը՝ իբրև պատմական փաստաթուղթ, սովորաբար պետք է որ հրապարակվի միջազգայնորեն ընդունված չափանիշներով՝ բնօրինակի տեսքով, ամբողջությամբ, այնպես, ինչպես ստորագրվել ու վավերացվել է կողմերի միջև, քանզի դա միջպետական ու միջազգային քաղաքականության փաստաթուղթ է[11]: Բայց, ցավոք, մեր իրականության մեջ

---

[9] Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., «Ադանա» հրատ., 1991, էջ 263-264, տե՛ս նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբ., **Վլ. Ղազախեցյան**, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 383-384, տե՛ս նաև **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., ՀՅԴ հրատ., 2005, էջ 330:

[10] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 64-79:

[11] Տե՛ս **Ключников Ю. В.** и **Сабанин А. В.**, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, выпуск 2, М., 1929, էջ 71-73, տե՛ս նաև «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ., պրոֆ. **Կիրակոսյան Զ.**, Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ 683-687 և ուրիշներ:

և ոչ միայն մեզանում, բազմաթիվ են պատմական իրողությունների նենգափոխումները, մասնավորապես այն պնդումները թե իբր՝ Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազար ք. կմ.[12]: Իրականությունն այն է, որ Գ. Նժդեհի գլխավորած «Ինքնավար Սյունիքի» հետ միասին, դեռ չձշգրտված սահմաններով, Հայաստանի փաստացի հսկողության տակ գտնվող տարածքն ավելին էր, քան ներկայիս ՀՀ տարածքը:

Այսպիսով՝ պատմական փաստն այն է, ինչը անցյալում կատարված անառարկելի ճշմարտություն է և ենթակա չէ աղավաղման, առավել ևս կեղծման: Պատմական փաստի վրա է կառուցվում գիտականորեն հիմնավորված, ճշմարիտ պատմությունը: Այն ամենից առաջ պիտի վստահելի լինի և պատճառահետևանքային շղթայական կապի մեջ լինի նրան հարակից իրադարձության կամ երևույթի հետ, և միայն այդ պարագայում նա կարող է կոչվել **պատմական փաստ**:

2. Փաստերի տեսակները, տիպաբանությունը և առանձնահատկությունները

Փաստերի հետ արդյունավետ աշխատելու համար դրանք ընդհանրացնում, խմբավորում և դասակարգում են: Ռուսաստանցի մեթոդաբան **Իսրայել Բիսկը** (1921–2009) պատմական փաստերը խմբավորել է երեք տեսակի՝ ա) ըստ բովանդակության՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական և գաղափարական, բ) ըստ կառուցվածքի՝ պարզ և բարդ և գ) ըստ նշանակության կամ կարևորության՝ էական (արժեքավոր) և ոչ էական[13]: Իրենց հերթին, օրինակ՝ տնտեսական պատմության փաստերը կարելի է ստորաբաժանել՝ ա)արդյունաբերության պատմության, բ) ագրարային պատմության, նաև տրանսպորտի, առևտրի, ֆինանսների, ժողովրդագրության մասին փաստեր և այլն: Ավելի վաղ ֆրանսիական ականավոր պատմաբան **Մարկ Բլոկը** փաստերի տեսակների թվին է դասել նաև դիվանագիտական և ռազմական պատմությանը վերաբերող փաստերը[14]: Պատմական փաստը՝ իբրև պատմական գիտելիքի եզակի աղբյուր, կարող է բաղկացած լինել մեկ

---

[12] Տե՛ս **Դարբինյան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890 են 1940), Եր., հրատ. «Ազգ» օրաթերթի, 2003, էջ 256, տե՛ս նաև **Գալոյան Գ.,** Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 376 և ուրիշներ:

[13] Տե՛ս **Биск И. Я.**, Методология истории: курс лекции, Иваново, изд. «Ив. гос. ун-т», 2007, էջ 48:

[14] Տե՛ս **Блок М.**, նշվ. աշխ., Մոսկվա, 1973, էջ 179:

հասկացությունից կամ նախադասությունից, բայց և կարող է կազմված լինել փաստերի մի ամբողջական փաստաթղթային հավաքածուից՝ որոշման, հրամանագրի, ծրագրի, պլանի կամ պայմանագրի տեսք ստացած՝ մեծաթիվ փաստեր պարունակող ծավալուն փաթեթից:

Փաստերի միջև գոյություն ունի ժամանակային և պատճառակցական կապի երկու հիմնական դրսևորում՝ մեկը, որ փաստը կամ փաստերը արձանագրվում են որոշակի **ժամանակատարածական** տիրույթում և երկրորդ, որ այն ունի **պատճառականություն**, այսինքն՝ կատարված փաստի հիմքում ընկած են լինում խորքային կապեր: Պատմաբան-հետազոտողը այնքան անհրաժեշտ փաստական նյութ պիտի հավաքի, որպեսզի կարողանա ժամանակատարածական ու պատճառահետևանքային առերևույթ ու խորքային կապերի բացահայտման միջոցով նկարագրի, համադրի, քննի, վերհանի, պարզաբանի, ընդհանրացնի, հիմնավորի ու ապացուցի իր նախընտրած գիտահետազոտական թեմայի կամ հիմնահարցի ամբողջական գիտական պատասխանը՝ դուրս բերելով փաստական նյութերից բխող անհրաժեշտ հետևություններ, օրինաչափություններ, պատմության ուսանելի դասեր, պատգամներ և այլն:

Հարկ է նկատել, որ փաստերը դեպքեր, իրադարձություններ, երևույթներ են ժամանակի և տարածության մեջ և արտաքուստ ունեն որոշակիորեն ուրվագծված սահմաններ, ինչպես օրինակ՝ պատերազմը կամ հեղափոխությունը: Այդ երևույթները ավել կամ պակաս չափով սահմանափակված են որոշակի ժամանակատարածական շրջանակների մեջ: Սակայն դա չի նշանակում, թե տվյալ ընդգրկուն պատմական փաստերը դրանով ավարտվում են: Իրականում դրանք, բացի այն, որ կարող են տարիներ տևել, հետագայում ևս իրենց ժամանակային շրջանակից դուրս, այլ դրսևորումներով (հաղթանակ, թե պարտություն) ունենում են իրենց տրամաբանական գործընթացների շարունակականությունը: Ինչպես, օրինակ՝ 1917 թ. Բոլշևիկյան հեղաշրջման պատմական փաստի արդյունքը եղան ավելի քան 70-ամյա խորհրդային այդպես էլ չկայացած սոցիալիզմն ու կոմունիզմը և այլն:

Հարկ է նկատել, որ անցյալի պատմական փաստերը, որոնցում գործառել են անհատներ կամ զանգվածներ՝ հոգեբանական առումով պատմաբանին անհասանելի ու անճանաչելի են: Այսպես, օրինակ, շատ հաճախ պատմաբանները բերում են Կեսարի կողմից Ռուբիկոնն անցնելու ճակատագրական վճռի կայացման ընթացքում նրա անձնական ապրումները, թե գետն անցնելիս՝ ի՞նչ մտածումներ է նա ունեցել: Դա

հոգևոր ոլորտին վերաբերող փաստ է, որը միայն Կեսարը կարող էր ի-մանալ: Դա մի առանձնահատուկ հուզական փաստ է, որ պակասում ու բացակայում է բնագիտության մեջ: Տեղայնացնելով հարցը և կապելով հայկական իրականության հետ՝ կարող ենք, օրինակ, դատողություն-ներ անել, թե 1920 թ. դեկտեմբերի 2-ի գիշերը Ալեքսանդրապոլի հաշ-տության պայմանագիրը ստորագրելուց առաջ ինչպիսի՞ ապրումներ է ունեցել Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը, ո-րի մասին նա գրում է իր հուշեր-մենագրությունում: Ստորագրելուց ա-ռաջ նա հեռագրաթելով երկու անգամ դիմել է այդ ժամանակ Հայաս-տանի դիկտատոր Դրոյին՝ երկու դեպքում էլ Դրոն Խատիսյանի հար-ցապնդմանը պատասխանել է՝ «Դա Ձեր գործն է»[15], ինչը ավելի է մե-ծացրել վերջինիս հուզական ապրումները: Բայցևայնպես, նա, հաշվի առնելով Հայաստանի ու հայ ժողովրդի գլխին կախված մահացու վտանգը, գոնե՝ եղածը փրկելու և խաղաղություն հաստատելու հա-մար, նաև միգուցե ինչ-որ տեղ անձնական վախ զգալով այն տեսա-րանից, երբ Սև ամրոցի պատուհանից տեսել է բակում կախաղան բարձրացված հայ զինվորներին, դեկտեմբերի 2-ին, ժամը 2-3-ի միջա-կայքում ստորագրել է պայմանագիրը:

3. Պատմական սկզբնաղբյուրները, դրանց դասակարգումը և պատմական փաստը գիտապատմականի վերածելու աշխատակարգերը

Պատմագիտության մեջ հիմնարար դեր են խաղում **սկզբնաղբ-յուրները**, որոնք պատմաբանի համար գիտելիքների բազա են ստեղ-ծում: Պատմական փաստը հնարավոր է ուսումնասիրել և նկարագրել միայն սկզբնաղբյուրների միջոցով: **Պատմական փաստերը դուրս են բերվում զանազան սկզբնաղբյուրներից՝ ըստ կարևորության ու նշանակության, իսկ դրանք շրջանառության մեջ դնողը արխիվա-գետը կամ մասնագետ պատմաբանն է**:

Նրա գործառույթն այն է, որ սկզբնաղբյուրից վերցնում (առանձ-նացնում) է ժամանակին արձանագրված օբյեկտիվ իրողությունը, որը պիտի հավաստագրվի, ունենա որոշակի արժանահավատ բովանդա-կային կողմ: Դա փաստի առաջին աստիճանն է: Այնուհետև՝ երկրորդ

[15] **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, «Համազգային» տպ., 1968, էջ 310:

աստիճանում, պատմաբանը այն քննում, մեկնաբանում, լուսաբանում ու ներկայացնում է՝ կապելով հարակից այլ փաստերի հետ, դրանք ներկայացնելով ոչ միայն փոխադարձ պատճառակցական կապի, այլև զարգացման գործընթացի մեջ: Եվ արդյունքում **պատմական փաստը** դառնում է իմաստավորված **գիտապատմական** փաստ, որով ներկայացվում է անցյալի իրականությունը, որն այլևս կախված չէ իրեն ճանաչող սուբյեկտից: Այդպիսով փաստը հանդիսանում է պատմական գիտելիքի իրական ու ճշմարիտ հիմքը: Կնշանակի՝ պատմաբանի համար բնավ բավարար պայման չէ փաստերի հավաքումը և դրանց ընդամենը ժամանակագրական հաջորդականությամբ շարադրումը: Իբրև հետազոտող՝ նա պիտի ձգտի թափանցելու պատմական փաստ հանդիսացող տվյալ իրադարձության կամ երևույթի խորքը և փորձի բացահայտել դրա ներքին, երբեմն՝ արտաքուստ չնկատվող թելերը, երևույթների պատճառակցական կապը, դրանց բուն էությունը՝ հասնելով փաստի գիտապատմական ձևակերպման աստիճանի:

Այսպիսով՝ պատմագիտական ուսումնասիրության օբյեկտը հանդիսացող պատմական **փաստի** և սուբյեկտը հանդիսացող **պատմաբանի** միջև կանգնած է պատմական **սկզբնաղբյուրը:** Վերջինիս գործառնության արդյունքում ստացվում է **գիտապատմական** փաստը՝ իբրև տարտամ անցյալականությունից զատված **պատմագիտական ճանաչողության արդյունք**: Իհարկե, խոսքը վերաբերում է առավել վստահություն ներշնչող, հիմնականում՝ գրավոր սկզբնաղբյուրներին:

Պատմությունը՝ իբրև անցյալի մասին փաստ-հիշողություն, արձանագրված է պատմական ամենատարբեր տիպի **իրեղեն**, **գրավոր, բանավոր**, այդ թվում՝ վերապատմված, նյութական և այլ սկզբնաղբյուրներում ու վավերագրերում կամ էլ ժամանակակիցների հիշողություններում, նոթերում, տարեգրություններում, ժամանակագրություններում, իսկ նոր և նորագույն ժամանակներում՝ պետական ու հասարակական բնույթի կառույցների պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի արխիվներում, թանգարաններում, թվայնացված էլեկտրոնային ու ֆոտո-ֆոնո ֆոնդերում, ժամանակի պարբերական մամուլում, տեղեկատվական աղբյուրներում, վիճակագրական ու փաստավավերագիր համահավաք ժողովածուներում և այլուր: Պատմական բնույթ ունեցող ու արժեք ներկայացնող փաստաթղթերը հիմնականում կենտրոնացված են պետական արխիվներում, գրադարաններում, պետական և անհատական թանգարաններում:

Ֆրանսիացի պատմաբան Լ. Ֆևրը նշում է, որ պատմության համար սկզբնաղբյուրը միայն տեքստերը չեն, այլ պատմական բնույթի գրեթե ամեն մի դրվագ ու մանրուք՝ հազարամյա տոհմաբանությունը, մարդկանց հոգեբանությունը, լեզուն, թիվը, տեղանքը, կալվածքը, նկարները, պիեսը, ոտանավորները, մի խոսքով՝ այն ամենը, ինչով հնարավոր կլինի լրացնել պատմության բացը[16]:

Նրանից դեռ մեկ դար առաջ գերմանացի ականավոր պատմաբան **Յոհան Դրոյզենը** (1808–1884) փորձել է համադրել գրավոր և բանավոր սկզբնաղբյուրները՝ արժանահավատության և վստահելիության տեսակետից, որոնցից, անշուշտ, առանձնանում են գրավոր արխիվային փաստաթղթերը, իսկ ահա գրավոր աղբյուրներից առանձնանում են արխիվային վավերագրերը: Դրոյզենը նշում է, որ արխիվներ եղել են անգամ Հին աշխարհում, որոնցում թագավորները պահ են տվել փաստաթղթեր, նամակներ, ճառեր և այլն: Օրինակ՝ նա նշում է, որ Դիոդորոս Սիկիլացին (Սիցիլիցես) ակնարկում է **Ալեքսանդր Մեծի արխիվի** գոյության մասին, սակայն հայտնի չէ դրա ճակատագիրը՝ այն ընկել է ուրիշի ձեռքը, թե այրվել է[17]: Դրոյզենի պատկերացմամբ, ի տարբերություն արխիվային նյութերի և առհասարակ գրավոր աղբյուրների, «բանավոր ավանդություններում ձգտում կա բոլոր փաստ-իրադարձությունների պարզեցման և դրանցում հիշեցվում են միայն հետաքրքիրները»[18]: Մյուս կողմից՝ գրավոր աղբյուրները ևս ոչ միշտ են վստահելի: Այսպես, սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ պատմիչ-հեղինակը և անգամ պատմագիրը շատ հաճախ կարող են կողմնակալ ներկայացնել պատմական իրողությունը կամ իրադարձությունը, ասենք՝ հօգուտ իր հովանավոր իշխանի կամ նախարարի: Եվ չի բացառվում, որ հետագայում այդ նույն պատմությունը հետագայում կարող է հավելվել ուրիշ պատմիչ-հեղինակների կամ գրիչների զետեղած լրացուցիչ պատմություններով, գրական-գեղարվեստական նյութերով, որոնք առաջ են բերում կասկած, նույնիսկ գիտական բանավեճ՝ տվյալ աշխատության ժամանակագրական ու բովանդակային արժանահավատության (հավաստիության) վերաբերյալ:

Այդպիսի տարընթերցումների ու շփոթի կարելի է հանդիպել նաև Հայոց հին և միջնադարյան հեղինակների աշխատություններում:

---

[16] Տե՛ս **Февр Л.**, Бои за историю, М., изд., «Наука», 1991, էջ 20:

[17] Տե՛ս **Дройзен И.**, История эллинизма, т. I, Ростов-на-дону, изд. «Феникс», 1995, էջ 602:

[18] **Дройзен И.**, Историка. Лекции об энциклопедии и методологии истории, СПб, изд. «Вл. Даль», 2004, с. 77.

Մեզանում նույնիսկ վերջնական հստակություն չկա, թե, օրինակ, «Աշխարհացոյց»-ի հեղինակը Անանիա Շիրակացի՞ն է (VII դար), թե՞ Մովսես Խորենացին (V դար): Ներկայումս հիմնավոր տեսակետ կա, որ դրա հեղինակը պատմահայր Խորենացին է: Բանն այն է, որ «Աշխարհացոյց»-ը ունեցել է երկու խմբագրություն՝ ընդարձակ և համառոտ տարբերակներ: Ընդարձակը կազմվել է V դարում և նրա հեղինակը, ըստ ամենայնի, Մ. Խորենացին է, իսկ համառոտը՝ ընդարձակի հիման վրա, ավելի ուշ՝ VII դարում, որի հեղինակը համարում են Ա. Շիրակացուն[19]: Հայոց նախաքրիստոնեական պատմության ու մշակույթի աղբյուրների հետ կապված՝ պետք է արձանագրել, որ 301 թ., քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունումից հետո նախաքրիստոնեական պատմության ու մշակույթի շատ աղբյուրներ և արժեքներ ոչնչացվել են:

Այս առնչությամբ ուշագրավ է գերմանացի ականավոր պատմաբան Դրոյզենի՝ Աստվածաշնչի բնօրինակ լինելու հարցի վերաբերյալ դիտարկումը: Նա գրում է, որ Աստվածաշնչի հատկապես առաջին երեք գրքերը, որոնք վերաբերում են **Հիսուսի** կյանքին, մեզ համար միանգամայն արժանահավատ են, իսկ հետագա գրքերում ու բաժիններում բերվում են տվյալներ Հռոմեական կայսրության պետական կառուցվածքի, ստրատեգների, ցենզորների և այլնի վերաբերյալ, որոնք կասկած են ներշնչում[20]:

Բուն Ռեֆորմացիայի դարաշրջանում ևս, երբ առաջին պլան էր մղվել մարդու ազատության գաղափարը, իսկ քննադատության թիրախում էր հայտնվել եկեղեցին, այդ շրջանի պատմագիր հեղինակները բացահայտել են եկեղեցական շատ տեքստերի մատյաներում հայտնված բազմաթիվ մարգարեությունների, պատում-մեկնությունների և ուսմունքների կեղծ ու խաբկանք լինելը: Օրինակ՝ միջնադարյան պատմական նյութերի հանդեպ քննադատական մոտեցման հեղինակ Լորենցո Վալլան 1439 թ. ապացուցել է «Կոնստանտինոս կայսրի նվիրատվության» շնորհագրի կեղծ լինելու փաստը[21]: Կեղծվել են նաև հին դրամներ, նամակներ, շնորհագրեր, նույնիսկ արձանագրություններ, որոնք պատճենահանված կամ մտացածին են: Փաստաթղթերի կեղծա-

[19] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայոց պատմություն, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2022, էջ 104-105:

[20] Տե՛ս **Дройзен И. Г.**, Историка. Лекции об энциклопедии и методологии истории, СПб, 2004, էջ 78-79:

[21] Տե՛ս **Дройзен И. Г.**, նշվ. աշխ., էջ 107, տե՛ս նաև՝ **Вайнштейн О. Л.**, Историография средних веков, М.-Л., «Гос. издать», 1940, էջ 51:

ռարության հետ կապված, Դրոյզենը բերում է գերմանացի իշխանների Գերմանական միության անդամների արտոնությունների և շնորհագրերի բնօրինակների վերաբերյալ տվյալները և փաստում դրանց հիմնականում կեղծ լինելը[22]:

* * *

Պատմությունը գրվում է ըստ փաստաթղթերի ու դրանց բաղադրիչը հանդիսացող փաստերի: Պատմական փաստաթուղթը երբեմն ապրած մարդկանց թողած մտքերի, գործերի ու գործողությունների հիշելի **հետքն** է: Ուստի **պատմական սկզբնաղբյուրները կարելի է համակարգել ըստ ժամանակագրության, ըստ հիմնահարցերի, ըստ անհատական ֆոնդի, ըստ աշխարհագրական և վարչա-տարածքային տեղաբաշխման և այլն**:

Սկզբնաղբյուրները՝ գրավոր, իրեղեն (նյութական) և բանավոր, լինում են **ուղղակի** և **անուղղակի**: Ուղղակին ժամանակի ու տարածության առումով ընդգրկում է տվյալ իրադարձությունը կամ երևույթը, իսկ անուղղակին կամ կողմնակին այն է, որը թեև անմիջական առնչություն չունի տվյալ իրադարձության հետ, սակայն անուղղակի կամ միջնորդավորված կերպով կարող է նպաստել ու օժանդակել հետազոտվող նյութի պարզաբանմանը: Նման պարագայում առավել վստահելին ու արժանահավատը ուղղակի սկզբնաղբյուրներն են: Բայց այդ ժամանակ էլ կարող է սկզբնաղբյուրի հանդեպ վստահության կամ կասկածանքի տեղիք տվող խնդիր առաջանալ՝ դրա ակունքների, ձևավորման հանգամանքների, սուբյեկտիվ գործոնի միջամտության, որոշակի կանխակալ դիտավորության և այլ հանգամանքների հետ կապված:

Պատմության համար, մասնավորապես նոր և նորագույն դարաշրջանում, սկզբնաղբյուրի դեր կարող են խաղալ տվյալ ժամանակի պարբերական մամուլը՝ թերթ, ամսագիր, տեղեկատվական միջոցներ: Սակայն դրանք վստահության և օբյեկտիվության փոքր չափաբաժին ունեն, քանզի այնտեղ ևս առկա է սուբյեկտիվ բաղադրիչը: Նույնը կարելի է վերագրել պատմական բնույթի հուշերին ու հուշագրություններին: Սրանք ևս կարելի է դասել պատմությանը սպասարկող հում նյութի շարքին: Ռուս ականավոր գրաքննադատ Վ. Բելինսկու դիպուկ արտահայտությամբ՝ «հուշերը դեռ պատմություն չեն, դրանք միայն նյու-

[22] Տե՛ս **Дройзен И. Г.**, Историка. Лекции об энциклопедии и методологии истории, СПб, изд. «Вл. Даль», 2004, էջ 283:

թեր են պատմության համար»[23]: Այս առնչությամբ նախ պետք է պարզել, թե ով է հուշերի հեղինակը, երբ և ինչ պայմաններում են գրվել և այլն: Անգամ պատմական բնույթի (ասենք՝ Ռաֆֆու) պատմավիպասանական, գրական կամ գեղարվեստական աշխատությունները ևս կարող են ինչ-որ չափով պատմությանը սպասարկող սկզբնաղբյուրի դեր կատարել:

Պատմական սկզբնաղբյուրների, դրանցում առկա պատմական փաստերի հանդեպ քննական մոտեցում ցուցաբերելու հարցում ծանրակշիռ ներդրում ունեցած քննական պատմագրության հիմնադիր գերմանացի **Լեոպոլդ ֆոն Ռանկեն** (1795–1886) հանդես է բերել մեթոդաբանական մի մոտեցում, որը ստացել է «**Ռանկեի մեթոդ**» անունը: Համաձայն այդ մեթոդի՝ նա պատմաբան-հետազոտողից պահանջում էր երեք հիմնական պահանջ-պայմանի կատարում, այն է՝ նախ պարզել յուրաքանչյուր **սկզբնաղբյուրի ծագումը**, երկրորդ՝ հեղինակի **իրազեկությունը** և երրորդ՝ նրան **վստահելու աստիճանը**[24]: Բերվածը ցույց է տալիս, որ Ռանկեի ժամանակներում ևս տեղ են գտել պատմական ճշմարտության աղավաղման բազում ձևեր՝ սկսած կիսաճշմարտություններից մինչև փաստերի շրջանցում և պարզապես կանխամտածված սուտ, կամ էլ ոչ բավարար իրազեկության պատճառով իրականության աղավաղում և այլն:

Պատմական աղբյուրները, մեկ այլ ձևակերպմամբ, լինում են **առաջնային սկզբնաղբյուրներ**, որոնք իրադարձային, ժամանակային, փաստի կարևորության ու վստահություն ներշնչելու առումներով անկասկած կարևոր են, և կան **երկրորդային՝** միջնորդավորված, օժանդակ համարվող աղբյուրներ, որոնց հաճախ չի կարելի նույնիսկ սկզբնաղբյուր համարել: Դրանց միջոցով անուղղակի կամ մի երրորդ դեմքով ասվում կամ ակնարկվում է տվյալ իրադարձության, երևույթի մասին: Սակայն դրանք անքան էլ վստահություն չեն ներշնչում և՛ ժամանակային, և՛ բովանդակային, և՛ աղբյուրի ակունքի առումներով: Հասկանալի է, որ իրեղենն ու գրավորն ավելի վստահելի են, քան ոչ գրավորը՝ միջնորդավորվածը, բանավոր վերապատմածը:

Պատմությունը ձևի և բովանդակության տեսակետից ներկայացնում է ժամանակի ու տարածության մեջ կատարվող **փոփոխու-**

[23] **Белинский В. Г.**, Избранные философские произведения, в 2-х т., М., изд. «Академии наук», 1948, т. I, с. 379.

[24] Այդ մասին տե՛ս **Биск И. Я.**, Методология истории: курс лекции, Иваново, изд. «Ив. гос. ун-т», 2007, էջ 59:

թյունները, հասարակական տեղաշարժերը, երևույթները, իրադարձությունները և այլն: Նրա հետազոտության օբյեկտը միշտ վերաբերում է անցյալին: Դա նշանակում է, որ ուսումնասիրության ժամանակ տվյալ օբյեկտը այլևս գոյություն չունի, գոյություն կարող են ունենալ միայն նրա հետքերն ու գործողությունների կոնկրետ **հետևանքները**, կյանքի պայմանների փոփոխությունները, ինչին, սակայն, կարելի է հետևել **հետահայաց (ռետրոսպեկտիվ)** դիտարկման միջոցով:

Իրադարձություն-փաստը իրական, վավերական իրողություն է, որը կատարվել է անցյալում՝ անկախ մեր գիտակցությունից: Սակայն փաստը՝ իբրև սկզբնաղբյուր, կարող է քողարկված լինել երկու կասկած հարուցող հանգամանքով՝ սկզբնաղբյուրի **բնագրական արժանահավատության** աստիճանով, իսկ մյուսը՝ հետազոտություն կատարող հեղինակի **սուբյեկտիվ մոտեցումով** ու վերաբերմունքով: Այս երկու հանգամանքները կարող են և՛ նպաստել պատմական ճշմարտության վերհանմանը, և՛ մեծապես վնասել, աղավաղել և ծուռ հայելու մեջ ներկայացնել պատմական իրականությունը: Այլ խոսքով՝ պետք է հաշվի առնել, թե ինչ անաչառությամբ ու պրոֆեսիոնալիզմով է շարադրված պատմական փաստը, փաստերի խումբը, իսկ մյուս կողմից՝ որքանով է գիտականորեն հիմնավոր ու համոզիչ ներկայացված ամբողջական պատմությունը:

4. Դիտարկումներ պատմական փաստի մասին

Ինչպես արդեն ասվել է, փաստաթղթի արժևորման համար առավել կարևոր է պարզել, թե ով կամ ովքեր են եղել կազմողները, իսկ մյուս կողմից՝ դրանից օգտվող և պատմությունը շարադրող պատմաբանը: Այստեղ ծագում է մի կողմից՝ փաստաթղթի արժանահավատության, բնօրինակության, իսկ մյուս կողմից՝ փաստաթուղթն ուսումնասիրող պատմաբանի անկողմնակալության ու անշահախնդրության հարցը: Բանն այն է, որ փաստաթուղթը ներկայացնող պատմաբանը, ելնելով անձնական (սուբյեկտիվ), գաղափարական, պետական-պաշտոնական, խմբակային, կուսակցական և այլ շահերից ու նկատառումներից, **չի բացառվում**, որ կարող է աղավաղել, նենգափոխել, կեղծել կամ ներկայացնել կողմնակալ մոտեցումով:

Այս առնչությամբ մեզ համար վառ օրինակ կարող են լինել խորհրդային կայսրության պետական գրությունների և պետական-պաշտոնական ու վիճակագրական տվյալների հաճախ կասկած հա-

րուցող տվյալները, առաջադրանքները, դրանց կատարողականը և այլն, իսկ մյուս կողմից՝ պետական ու կուսակցական բարձրագույն մարմինների հանձնարարականները կատարող, դրանք իբրև պատմական իրողություն ներկայացնող խորհրդային պատմագրության եզրակացությունները:

Ինչպես արդեն ասվեց, պատմական փաստերը, որպես կանոն, դուրս են բերվում սկզբնաղբյուրներից: Բայց ամեն մի պատմական փաստ չէ, որ **ստույգ** է: Օրինակ՝ ոչ վաղ անցյալի խորհրդային երկրի պատմությունից կարելի է բերել իշխող ԽՄԿԿ-ի ու բարձրագույն ղեկավարության որոշումները: Հիշենք ԽՍՀՄ-ի ու առանձին հանրապետությունների սահմանադրություններում առկա պնդումներն այն մասին, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, հողն ու ընդերքը ևս պատկանում են ժողովրդին կամ թե՝ ԽՍՀՄ հանրապետություններին տրվում է ազատ **ինքնորոշման** իրավունք և այլն: Այսպես, Լենինը պնդում էր՝ «ազգերի ինքնորոշում, անշուշտ, նշանակում է՝ **քաղաքական** (ընդգծումը մերն է – Ա. Հ.) ինքնորոշում, այսինքն՝ անջատման իրավունք և ինքնուրույն (ինքնիշխան) ազգային պետության ձևավորում»[25]: Իսկ հետագայում նա իր մեկ այլ դատողությունում հռչակում էր. «Ազատ անջատումը՝ **դեմոկրատիզմի բարձրագույն** (ընդգծումը մերն է – Ա. Հ.) արտահայտություն է»[26]: Բնականաբար, համանման մտքեր ու ձևակերպումներ տեղ են գտել ՌՍԴԲԿ-ՀամԿԲ(բ)Կ – ԽՄԿԿ գրեթե բոլոր ծրագրերում՝ սկսած 1903 թ. ՌՍԴԲԿ 2-րդ համագումարից, հանձին այնտեղ ընդունված կուսակցության առաջին ծրագրի 9-րդ կետի: Վերջինում ամրագրված էր՝ «Պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունք»[27]: Բայց այս՝ «բարձր մակարդակի» փաստերն ու փաստաթղթերը իրականում հաճախ գործնական որևէ արժեք չեն ունեցել: Ընդհակառակը, խորհրդային պետության ազգային քաղաքականության նպատակը եղել է շուրջ 120-ի հասնող ազգային ու էթնիկ միավորներին հավաքելը ու պահելը ամբողջատիրական կայսրության մեջ, իսկ եթե հնարավոր է՝ դրանց միախառնելն ու ձուլելը մեկ ընդհանուր՝ **խորհրդային ժողովուրդ** հասկացության միջոցով:

Խորհրդային պետության 70-ամյա ուղին մեզ հիմք է տալիս արձանագրելու, որ նրա պատմության ընթացքում, ըստ էության, կա-

---

[25] **Ленин В. И.**, ПСС, М., 1980, т. 24, с. 248.

[26] Նույն տեղում, հատ., 27, էջ 440:

[27] ՍՄԿՊ համագումարների, կոնֆերանսների և ԿԿ-ի պլենումների բանաձևերում ու որոշումներում, մաս 1, Եր., Հայաստանի պետ. հրատ., 1954, էջ 46 (1058 էջ):

տարվել է **երկու կարգի կեղծիք**: Մեկը, որ քաղաքական-քարոզչական և այլ նպատակներով ընդունվել են խոստումնալից որոշումներ, ծրագրեր, առաջադրանք-պլաններ, իսկ մյուսը, որ, որպես կանոն, դրանց մեծ մասը եղել է խաբկանք, պարզապես չի իրագործվել կյանքում, իրականության մեջ: Այդ խաբկանքներից մեծագույնը կոմունիզմի կառուցման սին ծրագիրն էր:

Անշուշտ, **նման փաստաթղթերում եղածը ձևի առումով պատմական փաստ է, սակայն այն, ըստ էության, քաղաքական կեղծիք է և կապ չունի իրական կյանքի ու ճշմարտության հետ**: Պատմական փաստն այն է, որը կապված է ոչ միայն արձանագրված որոշման կամ պլանի ընդունման հետ, այլ, որ այդ որոշում-պլանները որքանով են գործադրվել ու նյութականացվել իրական կյանքում և դրանով դարձել պատմական իրողություն, փաստ կամ կյանքի մաս: Եթե փաստը կյանքի ուղեգիր չի ստացել, չի գործադրվել, կնշանակի այն առնվազն դատարկ դեկլարացիա է եղել: Այստեղ է, որ պատմաբանը պիտի պարզի տվյալ փաստի ու փաստաթղթի կապը պատմական իրականության հետ: Եթե այն իրական պատմության հետ կապ չունի, պիտի արձանագրել, որ նման փաստ-փաստաթուղթը պարզապես քաղաքական-քարոզչական կեղծիք է: Այդպիսի փաստերը հսկայական են խորհրդային ավելի քան 70-ամյա պատմության մեջ: Սա նշանակում է, որ ներկայումս խորհրդային երկրի պատմության հարցերով զբաղվող պատմաբանները արխիվային ֆոնդերում, փաստաթղթերի ժողովածուներում ու նյութերում առկա տվյալները, հաշվետվությունները և այլն, չպետք է ներկայացնեն իբրև պատմական ճշմարտություն:

Անդրադառնալով իրական փաստերին վերաբերող հարցերի դիտարկմանը՝ հարկ է արձանագրել, որ դրանց վերաբերող փաստաթղթերի մի մասը, ցավոք, անհետ կորած է, ուստիև պատմական անցյալի շատ ծալքեր մնում են անհայտ: Կնշանակի, որ մեզ հայտնի են փաստաթղթերի ու պատմական վավերագրերի միայն մի մասը, ոմանց կարծիքով՝ դրանց շատ փոքր մասը: Անշուշտ, այնպես, ինչպես որևէ իր պատրաստելու համար **դարբնին** որպես նյութ անհրաժեշտ է **մետաղը**, նույնպես և **պատմաբանին՝** պատմություն գրելու համար, անհրաժեշտ է **փաստաթուղթը**: Այս առումով՝ ֆրանսիացի ականավոր պատմաբաններ, **Շառլ Լանգլուան** (1863-1929) և **Շառլ Սենոբոսը** (1854-1942), խոսելով փաստաթղթերի մասին, գրում էին. «Պատմությունը գրվում է ըստ փաստաթղթերի: Փաստաթուղթը դա երբեմնի ապրած մարդկանց

թողած մտքերի և գործողությունների հետքն է: Համաշխարհային պատմության փաստաթղթերի մի մասը, ցավոք, անհետ կորած է և պատմական անցյալի շատ ծալքեր անհայտ են: Ոչինչ չի կարող փոխարինել փաստաթղթին՝ «**չկա փաստաթուղթ, չկա և պատմություն»** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)[28]:

Գերմանացի պատմաբան **Էդուարդ Մեյերը** (1855–1930) ևս կարծում էր, որ պատմագիտական փնտրտուքի բուն առարկան, նրա **հիմքը** (ֆունդամենտը) պատմական որոշակի արժեք ներկայացնող **փաստն** է, դրա արձանագրումը[29]: Այս նույն առնչությամբ՝ բրիտանացի պատմաբան ու փիլիսոփա **Ռ. Քոլինգվուդը** (1889–1943) ակնարկում էր, որ «Հին Շումերներն իրենցից հետո ոչինչ չեն թողել, որ հնարավոր լինի կոչել շումերների պատմություն»[30]: Պատմությունը նաև անցյալի հիշողություն է, և այն հնարավոր է վերականգնել ու պահպանել պատմական փաստի միջոցով:

Մ. Բլոկի ժամանակակից ֆրանսիացի պատմաբան Լուի Ալֆանն իր «Պատմության ներածություն» աշխատությունում մեկ այլ դիտակետից նկատել է, որ «պատմության նպատակը անցյալը փաստերը մոռացությունից փրկելն է: Դրա համար գիտնականի առաջին և հիմնական խնդիրը փաստաթղթի բնօրինակության հաստատումն է, որում արձանագրված է պատմական ճշմարտությունը: Այնտեղ, ուր լռում են սկզբնաղբյուրները, պատմությունը համր է»[31].

Պատմական փաստերի արժևորման հետ կապված՝ գոյություն ունի նրանց արժանահավատության ու վստահելիության աստիճանը հստակեցնելու խնդիրը: Այսպես՝ անգամ որևէ ճակատամարտի հրամանատարը ի վիճակի չէ տեսնել մարտական գործողությունների **ամբողջական պատկերն** իր բոլոր դրվագներով: Նախկինում նա այդ մասին տեղեկանում էր իր օգնականների զեկույցներով, իսկ ներկայումս՝ առավելապես կապի արդի միջոցներով: Բայց այստեղ կարող է ծագել մեկ այլ խնդիր՝ հնարավոր է միևնույն **ճակատամարտը** դիտած

---

[28] **Ланглуа Ш. В., Сеньобос Ш.**, Введение в изучение истории, пер. с фр. **А. Серебряковой**, 2-е изд., М., «Гос. изд.», 2004, с. 49.

[29] Տե՛ս **Мейер Эд.**, Теоретические и методологические вопросы истории, пер. **А. А. Малинин**, 2-е изд., М., тип. Г. Лисснера и Д. Совко, 1911, էջ47:

[30] **Коллингвуд Р. Дж.**, Идея истории. Автобиография, пер. **Ю. А. Асеева**, М., изд. «Наука», 1980, с. 15.

[31] Մեջբերվում է ըստ՝ **Блок М.**, Апология истории или ремесло историка, перевод Лысенко Е. М., М., изд. «Наука», 1973, էջ 178:

հակառակորդ երկու կողմերը, ներկայացնեն ամենատարբեր մեկնաբանություններ ու գնահատականներ, ինչը բխում է նրանց կողմնակալությունից ու կանխակալությունից: Ավելին, միևնույն կողմի երկու ներկայացուցիչ՝ լինի հրամանատար թե շարքային կամ էլ կողմնակի դիտորդ, նույն իրադարձությանը կարող են տալ տարբեր նկարագրություններ, մեկնաբանություններ ու գնահատականներ: Այստեղից հետևում է, թե որքան է դժվարանում պատմաբանի գործը՝ անաչառ պատմություն ներկայացնելու տեսակետից:

Պատմության անկողմնակալ հետազոտողը փաստն արձանագրելիս պիտի հաշվի առնի դրա ակունքը, միտումնավորության գործոնը, վստահություն ներշնչելու աստիճանը և այլն: Ասենք, պատերազմի կամ պատերազմական գործողության վերաբերյալ արխիվում իրար հակասող օպերատիվ հաղորդագրությունների հիման վրա մարտական գործողությունների քննության ընթացքում պատմաբանը չպետք է բավարարվի միայն մի կողմի հրապարակած փաստավավերագիր նյութերով, որոնք հասկանալիորեն կարող են կողմնակալ լինել և չտալ պատերազմի օբյեկտիվ պատկերը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է անկողմնակալ դիրքերից քննել երկու կողմերի բերած տվյալները և դրանց համադրմամբ ու քննությամբ կատարել համապատասխան հետևություններ:

Պատմաբանի առաջնային ու հիմնական խնդիրը չպիտի լինի մերկ փաստերի ընդամենը արձանագրումը, թե ինչ է տեղի ունեցել, ինչպես ժամանակին (Ք. Ա. V դարում) պատմահայր Հերոդոտոսն էր պահանջում, այլ նրա առաքելությունն է ոչ միայն արձանագրել փաստը, իրադարձությունը, երևույթը, այլև **իր գիտատեսական կարողություններով և մեթոդական գործիքակազմով անաչառ ու անկողմնակալ դիրքերից քննել, վերլուծել ու գնահատել դրանք, կողմնորոշիչ փորձ ու դասեր հաղորդել ընթերցողին, հարստացնել նրա իմացության պաշարը, ընդլայնել աշխարհայացքը**:

Իրականում փաստերը կարող են անհաշիվ լինել: Պատմաբանի խնդիրը սոսկ կամայական փաստի արձանագրումը չէ, այլ այնպիսի փաստերի վերհանումը, որոնք **միտք** ու **բովանդակություն** են պարունակում, ուստիև **ազդեցություն** են թողել պատմական գործընթացների վրա: Հենց դա է գիտական հետազոտության առարկան:

Պատմաբանը պիտի կարողանա մանրակրկիտ ընտրել իր հավաքած պատմական նյութերի մեջ և դրանք ծառայեցնել հետազոտվող հիմնահարցի կամ թեմայի լուսաբանմանը: Պատմական հետաքրքրութ-

յան օբյեկտ կարող է լինել անցյալի գրեթե ամեն ինչ՝ անհատ մարդը, հասարակությունը, ժողովուրդները, պետությունը, նրա կառույցները, տնտեսությունը, գիտությունը, մշակույթը, կրոնը, մարդկանց հոգևոր կյանքը, մի խոսքով՝ այն ամենը, ինչ ազդել և շարունակում է ազդել կյանքի ու առաջընթացի վրա: Այդ համատեքստում կարելի է գրել նույնիսկ ինչ-որ գետի, հրաբխի, Լուսնի խավարման, որևէ կենդանու կամ ծառատեսակի պատմություն: Սակայն դրանք այնքան էլ էական չեն համարվում իրական ու բովանդակային պատմության համար:

Խորանալով քննվող հարցի էության մեջ՝ գերմանացի փիլիսոփա **Ֆրիդրիխ Նիցշեն** (1844–1900) պատմաբանի կողմից փաստի գործածության հարցին տվել է հետևյալ մեկնաբանությունը՝ «Պատմաբանը գործ ունի ոչ թե նրա հետ, ինչն իրականում եղել է, այլ միայն կարծեցյալ իրադարձությունների ու հերոսների, քանզի միայն սրանք են **տպավորություն թողել** (ընդգծումը մերն է – Ա. Հ.): Բոլոր պատմաբանները պատմում են բաների մասին, որոնք երբեք չեն եղել, բացի միայն պատկերացման մեջ»[32]: Իհարկե, դժվար է համաձայնել նման միակողմանի տեսակետի հետ, ինչը վիրավորական կարելի է համարել իրենց կոչմանը հավատարիմ պամաբանների համար:

Այդպես էլ, բայց փոքր-ինչ մեղմ, նորկանտական **Վիլհելմ Վինդելբրանդը** (1848–1915) պատմությունը ներկայացնում էր որպես նկարագրական պատկերների, առանձին կերպարների շարք, որոնք արժևորվում են «նշանակալի» կամ «ոչ նշանակալի» դրվագներով[33]: Պատմության շարադրանքը ավելի պատկերավոր ու գրավիչ դարձնելու համար կարելի է օգտագործել գրական, գեղարվեստական բնույթի հնարքներ և նույնիսկ մտացածին պատկերներ, սակայն պատմաբանի գլխավոր խնդիրը եղել ու մնում է հավաստի ու համոզիչ նյութերի հիման վրա գիտականորեն հիմնավորված շարադրանքը: Այս առումով «Աննալների» դպրոցի երկրորդ սերնդի ականավոր ներկայացուցիչ **Ֆերնան Բրոդելին** (1902–1985) է պատկանում հետևյալ միտքը՝ «Ես պնդում եմ՝ կարող են լինել տարբեր պատմություններ, սակայն գիտական պատմությունը միայն մեկ-եզակի է»[34]:

---

[32] **Ֆրիդրիխ Ն.**, Երկեր, հինգ հատորով, հատ. 2, թարգմ. **Հակոբ Մովսես**, Եր., «Անտարես», 2018, էջ 83:

[33] Տե՛ս **Виндельбранд В.**, История и естествознание, СПб, изд. Жуковского, 1904, էջ 320:

[34] Բերվում է ըստ՝ **Блок Марк**, Апология истории или ремесло историка, перевод Лысенко Е. М., М., изд. «Наука», 1973, էջ 200:

5.Պատմաբանի կոչումը, որակներն ու հատկանիշները

Պատմությունն ուսումնասիրող **պատմաբանը** պետք է օժտված լինի մի շարք անձնական, մարդկային, քաղաքացիական, մասնագիտական որակներով ու հատկանիշներով՝ կրթություն, արհեստավարժություն, աշխարհայացք, միջավայր, կենսապայմաններ և այլն: Ֆրանսիացի պատմաբան Լ. Ֆեբրն իր օրինակով հասկացնում էր, որ պատմաբանը չպետք է պատկանի որևէ կուսակցության, քանզի «ինքը պատմության մեջ չի տեսել ոչինչ, բացի պատմությունից»[35]: Նա պետք է հենվի միայն պատմական փաստերի ու փաստաթղթերի վրա, զինված լինի որոշակի մասնագիտական արհեստավարժությամբ (պրոֆեսիոնալիզմով), պատմության տեսության ու մեթոդաբանության գիտանոցով (գործիքակազմով), կատարի թեմայի ճիշտ ընտրություն, խորապես իրազեկ լինի սկզբնաղբյուրներին և այլն: Դրանց հիման վրա նա պետք է փորձի հրապարակ բերել իրական պատմությունը՝ նորովի իմաստավորված գիտելիք պարունակող տեքստի ձևով, տեղի ունեցած անցյալի իրադարձությունների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված ու **ճշմարիտ** պատասխան տալու, դրանից բխող հետևություններով ու եզրահանգումներով ներկա և ապագա սերունդների համար կողմնորոշիչներ ձևավորելու համար:

Այս առումով կարևորելով պատմական սկզբնաղբյուրի դերը՝ գերմանացի ականավոր պատմաբան Յոհան Դրոյզենը այն հավասարեցրել է Լեոնարդո դա Վինչիի, Ռաֆայելի, Տիցիանի, Միքելանջելոյի բարձրարժեք ու մնայուն ստեղծագործությունների հետ, որոնք հաճախ կեղծվել են, սակայն ներկայացվել են որպես բնօրինակ[36]: Բայց պատմական սկզբնաղբյուրի բնօրինակ լինելը դեռ բավարար պայման չէ, որ նրա միջոցով քննվող պատմական իրադարձությունը կամ երևույթը պատշաճ օբյեկտիվությամբ ու բնագրին հոգեհարազատ ճշմարտացիությամբ հրապարակ կբերվի: Այստեղ արդեն կարևորվում է քննախույզ պատմաբանի դերակատարությունը: Նրա կարևոր հատկանիշներից է պատմական նյութի հանդեպ **պատմաքննական** մոտեցումը: «Պատմաբանը,– գրում է բրիտանացի պատմաբան Ռ. Քոլինգվուդը,– ոչ միայն վերարտադրում է անցյալի մտքերը, այլև քննական մոտեցմամբ ներկայացնում է դրանք իր սեփական իմացության համատեքս-

---

[35] **Февр Л.**, Бои за историю, М., изд., «Наука», 1991, с. 23.

[36] Տե՛ս **Дройзен И. Г**., Историка. Лекции об энциклопедии и методологии истории, СПб, изд. «Вл. Даль», 2004, с.115:

տում, ճշգրտում ու գնահատում է այն բոլոր սխալները, որոնք նա կարող է հայտնաբերել դրանցում»[37]: Այլևայլ պահանջներից զատ՝ կարևորվում է հետազոտողի սուբյեկտիվ վարքագիծը, որ նա չտարվի քաղաքական, ծայրահեղ մղումներով՝ կողմնակալության, կամ պարզապես խաբեության չդիմելու համար: Պատմաբանը պիտի ունենա նաև ներքին ինտուիցիայով ու հոտառությամբ կարողունակ **պատմական մտածողություն**, առանց որի նա որակյալ վերջնարդյունքի չի հասնի:

Այսպես, օրինակ՝ հանրահայտ է 1918 թ. Մայիսյան հերոսամարտերն իբրև պատմական փաստ արձանագրելու համար կարելի է ներքին կապ տեսնել Հայաստանում ծավալվող այդ իրադարձության և տարածականորեն բավականին հեռու՝ Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհրդի կողմից անկախության մասին վճռի (հայտարարության) ընդունման և Բաթումում ընթացող թուրք-անդրկովկասյան բանակցությունների միջև: Ակնհայտ է նաև նրա անդրադարձական կապը՝ Բաքվում ծավալվող իրադարձությունների՝ թուրքական զորքերի դեմ Բաքվի կոմունայի և անգլիացիների զորակազմի դրամատիկ կռիվների հետ:

Մինչդեռ «Մայիս 28»-ի հետ կապված՝ մեզանում քաղաքական, հատվածական մղումներով կասկածի տակ է դրվել նրա անկախության վճիռ լինելու փաստը[38]: Այստեղ սակարկության առարկան այն է, որ Հայոց ազգային խորհրդում անկախության մասին հայտարարությունը՝ Ակտը ընթերցվել է մայիսի 30-ի առավոտյան նիստում՝ Խորհրդի նախագահ և նիստը նախագահող **Ավետիս Ահարոնյանի** (1866-1948) կողմից: Սակայն պատմական փաստ է, որ մինչ այդ՝ մայիսի 28-ի երեկոյան նիստում, բուռն քննարկումներից հետո բազմակուսակցական կազմով Հայոց ազգային խորհուրդը ընդունել է երեք կարևոր որոշում. այն է՝ ա) Խորհուրդն իրեն հայտարարել է օրենսդիր մարմին (պառլամենտ), որը պիտի կազմեր ժամանակավոր կառավարություն և միաժամանակ հայտարարություն աներ Հայաստանի անկախության մասին, բ) դրա հիման վրա Հայոց ազգային խորհուրդը հանձնարարել է Ա. Ահարոնյանին, Ն. Աղբալյանին, Հ. Քաջազնունուն, Ա. Խատիսյանին մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիր և գ) քանի որ հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, լրանում էր թուրքերի վերջնագրի

[37] **Коллингвуд Р. Дж.**, Идея истории. Автобиография, пер. **Ю. А. Асеева**, М., изд. «Наука», 1980, с. 205.

[38] Տե՛ս **Երզնկյան Ար.**, Ժողովրդական դատարանին, Թիֆլիս, 1927, էջ 50-51, տե՛ս նաև **Դարբինյան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890 են 1940), Եր., հրատ. «Ազգ» օրաթերթի, 2003, էջ 216 և 256. և այլք:

երեքօրյա ժամկետը, հանձնարարվել է հայ պատվիրակներին՝ Ալ. Խատիսյան (նախագահ), Մ. Պապաջանյան, Հ. Քաջազնունի, **անկախ Հայաստանի անունից** բանակցություններ վարել թուրքական պատվիրակության հետ, որոնց արդյունքում էլ հունիսի 4-ին կնքվեց Բաթումի հայ-թուրքական հաշտության պայմանագիրը[39]: Եվ առաջինը օսմանյան Թուրքիան է ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը: Սրանք զորավոր պատմական փաստեր են, որոնք հերքում են «Մայիս 28-ը»՝ որպես Հայաստանի Հանրապետության անկախության ստույգ օր կասկածի տակ դնելու փորձերը: Բացի այդ՝ վերոնշյալ փաստերի վերահաստատման նպատակով ընդգծենք, որ Ալ. Խատիսյանի վկայությամբ. «անկախության բանաձևը ընդունվել է Ազգային խորհրդի բոլոր կուսակցությունների համաձայնությամբ»[40]:

Խոսելով պատմական փաստի մեկնաբանության մասին՝ կարելի է արձանագրել, որ կարող են լինել փաստեր, որոնք պատմագրության մեջ, ոչ միանշանակ են արժևորվել ու գնահատվել: Օրինակ՝ Արևելյան Հայաստանի Ռուսաստանի կազմի մեջ մտնելու փաստը, ըստ գաղափարական ու հասարակական-քաղաքական նպատակահարմարության, կատարյալ բարիքից ու չարյաց փոքրագույնից որակվել է մինչև իսկ որպես **չարիք**[41]: Բայց նման որակում-գնահատականները հաճախ հանդիսացել են ոչ այնքան տվյալ պատմաբանի ներքին համոզմունքը, որքան հրահանգավորված պարտադրանքը, որի կապանքներից հայ պատմագիտական միտքը աստիճանաբար ազատվում է: Գիտական գնահատականն այն պիտի համարել, որ «միացումը», իսկ երբեմն նաև «բռնակցումը» օբյեկտիվորեն դրական երևույթ էր Հայաստանի ու հայ ժողովրդի համար, որը, սակայն, չէր կարող ազատություն ու անկախություն բերել Հայաստանին ու հայ ժողովրդին այն դեպքում, երբ Ռուսաստանյան կայսրության ժողովուրդների մեծագույն մասը, այդ թվում և բուն ռուս ժողովրդի մի ստվար հատվածը, մինչև 1861 թ. ճորտատիրական իրավունքի վերացումը, ըստ էության, գտնվում էր ճոր-

---

[39] **Տե՛ս Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., ՀՅԴ հրատ., 2005, էջ 41-42, (364 էջ), տե՛ս նաև Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող և խմբ., **Հ. Սուքիասյան**, Եր., Հայկարլի ՍՊԸ տպ., 2009, էջ 27-31:

[40] **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, Համազգային տպ., 1968, էջ 84:

[41] Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 1, Եր., «Պետ. համալսարան» հրատ., 1926, էջ 162 (228 էջ):

տի կարգավիճակում, ուստի ավելորդ կլինի խոսել հայերի և նույնիսկ ռուսների քաղաքական ազատությունների մասին[42]:

Պատմաբանը իր մեկնաբանություններում պիտի կարողանա որսալ պատմության տրամաբանական ընթացքը, նկարագրել փաստերը, նախապատվություն տալով առաջնային փաստերին և ինչպես ասել է գերմանացի ականավոր պատմաբան Լ. Ռանկեն՝ ցույց տալ, թե «**ինչպե՞ս է այն տեղի ունեցել իրականում**[43]» և վերջում ընթերցողին թողնել փաստերի հետ միայնակ:

Մի կողմից՝ սա ընդունելի է այնքանով, որ առանց միջամտության ընթերցողին է ներկայացվում պատմական իրադարձությունը, որից կարելի է պատկերացում կազմել պատմական այս կամ այն անցուդարձի մասին: Բայց մյուս կողմից էլ՝ պատմաբանի՝ իբրև փաստերի զուտ արձանագրողի համար դա սահմանափակ գործ կլինի: Մինչդեռ նա կոչված է ոչ միայն արձանագրել երևույթը, իրադարձությունը, այլև իր գիտա-տեսական կարողություններով ու մեթոդական գործիքակազմով վերաբերմունք ցուցաբերել, քննել, վերլուծել ու գնահատել դրանք, ընթերցող հանրությանը կողմնորոշիչ փորձ ու դասեր հաղորդել, զարգացնել նրա աշխարհայացքը և այլն:

Պատմաբանի կողմից պատմական անցյալի բացահայտումը անմիջական չէ, այնպես ինչպես դատավարական քննիչը ամենատարբեր իրեղեն, նյութական, գրավոր ու բանավոր տվյալների օգնությամբ բացահայտում է տեղի ունեցած հանցագործության ամբողջական պատկերը, որին հասկանալիորեն ինքը ականատես չի եղել, ուստի և անձամբ չի մասնակցել: Պատմաբանը, նույնպես անձամբ չի կարող տեսնել տասնամյակներ, դարեր ու նույնիսկ հազարամյակներ առաջ տեղի ունեցածը: Ուստի չպետք է զարմանալ, որ **գրեթե բոլոր ժամանակներում թույլ է տրվել** պատմական փաստերի ու փաստաթղթերի գիտակցված աղավաղում, խեղաթյուրում, բոլոր տեսակի պետական մարմինների, իշխանությունների կամ էլ՝ նրանց կամակատարների, այդ թվում՝ նաև պատմաբանների կողմից: Պատմական բնույթի նյութերից օգտվելիս հարկավոր է հանդես բերել կասկածանք ու դրանից բխող՝ քննական-վերլուծական մոտեցումներ: «Անալների» դպրոցի հիմնադիրներից, ազգությամբ հրեա **Մարկ Բլոկը**

[42] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Արևելյան Հայաստան՝ Ռուսաստանին միացման հիմնահարցի պատմագիտական գնահատականը խորհրդահայ պատմագրության մեջ (այդ մասին տե՛ս՝ «Պատմաբանասիրական Հանդես», Եր., 2023, N 3, էջ 46-58):

[43] **Ранке Л. Ф.**, Собрания трудов, т. 33, М., 1874, էջ VII, տե՛ս նաև՝ Большая Советская Энциклопедия (БСЭ), 3-е изд. М., 1975, т. 21, с. 459.

(1886–1944) նշում էր, որ ճշմարիտ պատմության վերհանման ամենանավնասաբեր **թույներից** են փաստերի գիտակցված կեղծումը, խեղաթյուրումը, խաբեությունը, մանիպուլյացիան և այլն[44]:

Հին և Միջին դարերում դրա վառ օրինակներից է հետևյալ փաստը. VIII դարում պապական կուրիայի կողմից ստեղծվել է «**Կոնստանտինի նվիրատվությունը**» («Дар Константина»), համաձայն որի՝ իբր թե Կոնստանտին I կայսրն իր կայսրության արևմտյան կեսը նվիրաբերել է Իսիդոր Սեվիլյան պապին: Դրա կազմողները՝ կարոլինգյան վերածննդի շրջանի հեղինակները, հաշվի չեն առել, որ իրենց հորինած այդ նվիրատվության տեքստի լեզուն բարբարոսական շրջանին է պատկանում, մինչդեռ Կոնստանտին Մեծի IV դարի ժամանակաշրջանի լեզուն հանդիսացել է դասական լատիներենը[45]:

Նույն կերպ հարկ է նաև հիշատակել 1918 թ. հուլիսի 17-ին դեռևս չձևավորված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ իբրև թե Թուրքիայի զինվորական մինիստր Իսմայիլ Էնվեր փաշային ուղղված գրությունը, որում խոսք կա հայդուկապետ Անդրանիկին երկուստեք **հետապնդելու** և **ջախջախելու** մասին[46]: Այն, որ այդ փաստաթուղթ կոչվածը, ըստ ամենայնի, հորինվածք է, երևում է գրությունը ստորագրած երեք անձերից երկուսի զբաղեցրած պաշտոնների անճշտությունից: Գրությունում ՀՀ զինվորական նախարար է նշված Արամ Մանուկյանը: Մյուս կեղծիքն այն է, որ գրությունը ստորագրած գործիչներից Ավետիս (իրականում պետք է լիներ «Ավետիք» – Ա. Հ.) Սահակյանը ներկայացված է որպես Հայաստանի խորհրդի նախագահ: Այնինչ Հայաստանի խորհրդարանը (Խորհուրդը) հուլիսի 17-ին դեռևս չէր ձևավորվել, և նրա առաջին նիստը պիտի գումարվեր օգոստոսի 1-ին, որտեղ էլ Ա. Սահակյանը կընտրվեր Հայաստանի խորհրդարանի նախագահ: Հուլիսի 17-ի ամսաթվով թվագրված այս նամակ-գրության խիստ կասկածելի լինելը երևում է նաև նրա օրվա առումով: Հուլիսի 17-ի դրությամբ Հ. Քաջազնունին և Ա. Սահակյանը դեռևս գտնվում էին Թիֆլիսում, իսկ Ա. Մանուկյանը՝ Երևանում, ինչը դարձյալ չի վկայում այդ փաստաթղթի վավերականության մասին:

---

[44] Տե՛ս **Блок М.**, Апология истории или ремесло историка, изд. 2-е, М., изд. «Наука», 1986, էջ 53:

[45] Տե՛ս **Блок М.**, Апология истории или ремесло историка, перевод Лысенко Е. М., М., изд. «Наука», 1973, с. 144, տե՛ս նաև **Биск И.**, Методология истории: курс лекции, Иваново, изд. «Ив. гос. ун-та», 2007, էջ 116.

[46] Այդ մասին տե՛ս «Հայկական ժամանակ», Եր., 1 սեպտեմբերի, 2001 թ.:

Պատմաբանը փաստերից օգտվելիս չպետք է ընտրի ցանկալին, հաճելին՝ պատմական իրողությունը վերհանող փաստն անտեսելով: Լ. Ֆևրը այս կապակցությամբ զգուշացնում է, որ «պատմաբանը իրավունք չունի ընտրել փաստեր, ընտրել՝ նշանակում է ոտնձգել իրականությանը, այսինքն՝ ճշմարտությանը»[47]: Հասկանալի է, որ նման պարագայում իրական և ճշմարիտ պատմությունը չի վերհանվի: Որոշակի հոտառությամբ ու աշխարհայացքով օժտված պատմաբան-հետազոտողը պետք է կռահի ու նկատի, որ փաստաթղթերն արդեն իրենց կազմման ընթացքում տեղ գտած ձևակերպումներով ու տվյալներով կարող են կեղծված լինել:

Բացի այդ, պատմաբանը պետք է գիտակցի, որ իր հետազոտությունը լիարժեք ու համոզիչ չի լինի, եթե սոսկ մի փաստաթղթի կամ վկայության հիման վրա այս կամ այն երևույթը կամ իրադարձությունը ներկայացնի իբրև անառարկելի ճշմարտություն: Հասկանալի է, որ դրա համար հարկավոր են լրացնող, օժանդակ, հարակից, հավելյալ այլ ապացույցներ ու հիմնավորումներ, իհարկե, հնարավորինս տեղի ունեցած երևույթի կամ գործողության ժամանակի ու տարածության տիրույթում: Միայն մեկ փաստի խնդիրը հաճախակի է ծագել հին շրջանի պատմության վերարտադրման ժամանակ, որովհետև անտիկ ժամանակներում մեծ չափով զգացվել է փաստերի **սղությունը**, իսկ ահա պատմության նոր ու նորագույն ժամանակաշրջանում սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, տեղեկատվության և այլ նյութերի առատությունն այնքան մեծ է, որ դրանց շնորհիվ նման խնդիր, որպես կանոն, չի ծագում: Բայց այստեղ էլ խնդիրներ են առաջ գալիս փաստերի ու փաստաթղթերի ճիշտ ընտրության, արժանահավատության ու վստահելիության առումով: Այնուամենայնիվ, երբ հնարավոր չի լինում տվյալ փաստը կամ փաստաթուղթը հիմնավորել, նման պարագայում հեղինակը տեքստում կամ տողատակում պիտի հայտնի այդ խնդրում իր վերապահ լինելու հանգամանքը, մինչև որ միգուցե հնարավոր կլինի այլ օժանդակ նյութերով ու վկայություններով հիմնավորել տվյալ փաստի իսկությունը:

Այս բոլորով հանդերձ՝ մեզ է հասել իրական պատմության ընդամենը **մի փոքր մասը**: Յոհան Դրոյզենը այս կապակցությամբ նշում է, որ «Պատմությունը անցյալի բոլոր իրադարձությունների հանրագումարը չէ, այլ որպես հայտնի կատարվածի մի որոշ մասի վերաբերյալ

[47] **Февр Л.**, Бои за историю, М., изд., «Наука», 1991, с. 69.

գիտելիքը»[48]: Հիշեցնենք, որ նույն առնչությամբ Մ. Բլոկը նշել է, որ «Անգամ որևէ ճակատամարտի հրամանատարը ի վիճակի չէ տեսնել մարտական գործողությունն ամբողջապես, իր բոլոր էպիզոդներով: Նրան այդ մասին զեկուցում էին իր օգնականները»[49]: Կամ էլ, միևնույն ճակատամարտը դիտած երկու անձ կարող են **տարբեր մեկնաբանություններ** ու գնահատականներ տալ, ինչը կախված է լինում ռազմաբեմում նրանց գրաված դիրքից, կողմնակալությունից, ռազմական գործին ոչ խոր իրազեկությունից և այլն:

Իրական պատմության մեծ մասը գտնվում է հողի շերտերում, ժամանակի մարդկանց հիշողություններից դուրս, և հազիվ թե հնարավոր կլինի դրանք հրապարակ բերել: Բայց կան պատմության օժանդակ գիտակարգեր, օրինակ, հնագիտությունը, ազգագրությունը, դրամագիտությունը և այլն, երբ պեղումների, գտածո իրերի միջոցով հնարավոր է լինում ինչ-որ չափով լրացնել տեղեկատվական վակուումը: Պատկերացնենք, որ ամենատարբեր պատմական գործընթացներին մասնակցում են միլիոնավոր մարդիկ՝ անհատներ, քաղաքացիներ, զինվորականներ, եկեղեցու հավատացյալներ և այլն: Դժվար է որսալ, ընկալել ու վերարտադրել այդ մարդկանց հոգեվիճակը, զգացումները, անձնական մղումները, բարոյական վարքագիծը և այլն: Այս բոլորը լայն ընդգրկումով համարվում են պատմության մաս, սակայն դրանց հսկայական բաժինը այդպես էլ մնում է ստվերում կամ անհայտության մեջ:

Պատմությանը իրազեկ լինելու տեսակետից՝ վիճակը բարդանում է, երբ հետազոտողը գործ է ունենում մասշտաբային իրադարձության ու հսկայածավալ նյութերի հետ, ուստի հնարավոր չի լինում իրադարձությունը ներկայացնել մեկ ընդհանրական մոտեցումով: Ժամանակի ու ծավալի խնայողության նպատակով հետազոտողը պիտի կարողանա զատել առաջնային ու երկրորդային նշանակության նյութերը ու պարտադիր չէ վերջիններս անպայման ներառել՝ ծանրաբեռնելով հետազոտվող թեման կամ հիմնահարցը: Վիճակը ավելի կդժվարանա, եթե հետազոտությունը դուրս գա մի երկրի շրջանակից: Առավել ևս, եթե խոսքը ծավալուն պատերազմի մասին է: Նման դեպքում հետազոտողի համար ծագում է ևս մի խնդիր. ինչպե՞ս է ներկայացնում տվյալ պատմական իրադարձությունը պատերազմող կողմե-

[48] **Дройзен И. Г**., Историка. Лекции об энциклопедии и методологии истории, СПб, 2004, с. 323.

[49] **Блок М**., Апология истории или ремесло историка, изд. 2-е, М., изд. «Наука», 1986, с. 30:

ից յուրաքանչյուրը, թեև հասկանալի է, որ յուրաքանչյուր կողմ կողմնակալ է ներկայացնում կատարվածը: Պետք է նաև նկատի առնել, որ պատմական իրադարձությունը կատարվում է իր ժամանակի ու տարածության մեջ, ուստիև նույնությամբ չի կարող կրկնվել: Այդ ամենի հետ միասին կարևորվում է նաև բուն պատմությունը ներկայացնող հետազոտող – հեղինակի անձնական վարքագիծը, նրա **գիտական բարեխղճությունը**, ներքին զգացական ազդեցությունը այս կամ այն երևույթի բացահայտման վրա, նրա իմացության մակարդակը, գիտելիքների պաշարը, հանրային միջավայրն ու պայմանները, որոնք կամա թե ակամա ներգործում են ճշմարիտ, իրական պատմության շարադրման վրա: Ուստի շատ հնարավոր է, որ իրար չհամընկնեն իրական պատմությունը և դրա շուրջ կազմված պատմական տեքստը:

Գիտական բարեխղճության սկզբունքային պահանջներից մեկն այն է, որ ոչ միայն սկզբնաղբյուրներից, այլև սովորական հեղինակների աշխատություններից քաղված մեջբերումներից անպայման պետք է **հղումներ տրվեն տողատակում**: Ցավոք, հանդիպում են դեպքեր, երբ մեկ հեղինակի աշխատությունից վերցված փաստը կամ միտքը բերվում է այլ հեղինակի մենագրությունում՝ շրջանցելով սկզբնաղբյուրի կամ վավերագրի հիմքերն ու դրանով իսկ ապակողմնորոշելով ընթերցողին: Հաճախ են նաև այն դեպքերը, երբ ուրիշից վերցված միտքը կամ ձևակերպումը առանց հղումի ներկայացվում է իբրև իրենը: Նման ածպարարական մոտեցումները կարելի է բնորոշել որպես գրագողություն:

Եզրակացություններ

Այսպիսով՝ գիտականորեն հիմնավորված պատմության գլխավոր ատաղձը պատմական սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերն են, իսկ դրանք մշակողը, քննողն ու վերլուծողը, անցյալի պատմական իրականության ճշմարիտ վերարտադրողը և հրապարակ բերողը արհեստավարժ պատմաբանն է:

Պատմական փաստը այս կամ այն իրադարձության փաստաթղթային վկայությունն է՝ պատմական գիտելիքի եզակի օբյեկտիվ աղբյուրը: Չկա պատմական փաստ, չկա և պատմություն: Բայց՝ միայնակ փաստը դեռ ոչինչ չի նշանակում: Ամենից առաջ այն պիտի վստահելի լինի և պատճառահետևանքային կապի կամ կապերի մեջ լինի իրեն հարակից իրադարձության կամ երևույթի հետ:

Պատմական փաստը սկզբնաղբյուրից մինչև գիտապատմական փաստի վերածվելը հետազոտության ընթացքում անցնում է երկու աստիճան և միայն այդ պարագայում է ստանում իմաստավորված **գիտապատմական փաստի** կարգավիճակ՝ որպես պատմագիտական ճանաչողության գործընթացի արդյունք:

Պատմությունը արձանագրված է ամենատարբեր տիպի **գրավոր, բանավոր**, այդ թվում՝ վերապատմված, նյութական ու իրեղեն և այլ սկզբնաղբյուրներում ու վավերագրերում: Սկզբնաղբյուրները նաև առհասարակ՝ պատմական աղբյուրները լինում են **ուղղակի** և **անուղղակի,** ինչպես նաև **առաջնային** կամ **երկրորդային** նշանակության: Ուղղակին ժամանակի ու տարածության առումով ընդգրկում է տվյալ իրադարձությունը կամ երևույթը, իսկ կողմնակին նրանք են, որ թեև անմիջական առնչություն չունեն տվյալ իրադարձության հետ, սակայն անուղղակի կամ միջնորդավորված կերպով կարող են նպաստել ու օժանդակել հետազոտվող նյութի պարզաբանմանը: Նման պարագայում առավել վստահելին ու արժանահավատը բնօրինակ հանդիսացող սկզբնաղբյուրներն են: Բայց այդ ժամանակ էլ կարող է սկզբնաղբյուրի հանդեպ վստահության կամ կասկածանքի տեղիք տվող խնդիր առաջանալ՝ կապված դրա ձևավորման հանգամանքների, սուբյեկտիվ գործոնի միջամտության, որոշակի կանխակալ դիտավորության և այլ հանգամանքների հետ:

Քանի որ պատմությունը՝ որպես գիտություն, գերազանցապես վերաբերում է մարդկանց և հասարակությունների անցյալի հետազոտությանը, այդ իմաստով անցյալի փորձի ու դասերի իմաստավորումն ու հանրությանը ներկայացնելը ունի արդիական ու գործնական նշանակություն ներկա և ապագա սերունդների համար: Պատմական փաստն այն է, ինչը անցյալում կատարված անառարկելի եղելություն է և ենթակա չէ որևէ աղավաղման, առավել ևս՝ կեղծման: Միայն պատմական փաստի վրա է կառուցվում իրական ու ճշմարիտ պատմությունը:

Իրական ու ճշմարիտ պատմության վերարտադրման ընթացքում՝ կապված սուբյեկտիվ, կողմնակալ, կուսակցական, դասակարգային և այլ հանգամանքներից, թույլ են տրվել պատմական փաստերի ու ընդհանրապես պատմության աղավաղումներ ու կեղ-

ծիքներ: Պատմական անցյալի փորձը, հրապարակ բերված պատմական գրականությունը, ցույց են տալիս, որ գրեթե բոլոր երկրներում և բոլոր ժամանակներում արձանագրվել են պատմական փաստերի ու փաստաթղթերի գիտակցված խեղաթյուրումներ: Այդ առումով «առաջամարտիկը» համարվում է 20-րդ դարում «կոմունիստական հասարակարգ կառուցող» խորհրդային երկիրն ու նրան սպասարկած պատմագրությունը:

Պատմությունն ուսումնասիրող **պատմաբանը մի սուբյեկտ է**, ով պետք է օժտված լինի մի շարք անձնական, մարդկային, քաղաքացիական, մասնագիտական որակներով ու հատկանիշներով՝ կրթություն, արհեստավարժություն, աշխարհայացք, միջավայր, կենսապայմաններ և այլն: Եթե չկա արհեստավարժ պատմաբան, չի կարող լինել ճշմարիտ պատմություն: Նա պետք է հենվի միայն պատմական փաստերի վրա, դրանք բարձրացնի գիտական մակարդակի, լինի բարոյական առումով բարեխիղճ, անաչառ ու անկողմնակալ, օժտված լինի պատմության տեսության ու մեթոդաբանության գործիքակազմով, կատարի թեմայի ճիշտ ընտրություն, հավաքի, ուսումնասիրի ու գնահատի սկզբնաղբյուրները և այլն: Դրանց հիման վրա նա պետք է փորձի հրապարակ բերել իրական պատմությունը՝ որպես նորովի իմաստավորված գիտելիք, տալ գիտականորեն հիմնավոր ու **ճշմարիտ** պատասխաններ՝ դրանցից բխող հետևություններով ու եզրահանգումներով, ուսանելի պատմական դասերով, ներկա և ապագա սերունդներին ուղղված կողմնորոշիչներով:

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են նոր և նորագույն շրջանի հայ քաղաքական մտքի, քաղաքական կուսակցությունների, Հայաստանի Հանրապետության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի և բազում այլ հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական և կոլեկտիվ ձեռնարկի ու ուսումնամեթոդական աշխատանքի և ավելի քան 150 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

Summary

THE MEANING AND IMPORTANCE OF A HISTORICAL FACT

In the context of the cognitive functions of the historian

Ararat M. Hakobyan
Doctor of Sciences in History

Key words – historical fact, source, historian, time, assessment, truth, May 28, scientific approach, methodology, L. Ranke, I. Droysen, M. Bloch, lies.

In historical science, both the concept of historical fact and the role of the historian are theoretically crucial elements without which a well-founded, true history cannot exist. Without historical facts, there is essentially no history. A historical fact gains its significance when it demonstrates causal connections with other facts across time and space. Through systematic and logical presentation of these connections, it becomes possible to illuminate particular historical events or episodes, and more broadly, to construct a substantiated, content-rich, and scientifically sound historical narrative.

History as a science primarily studies the past of people and societies. Therefore, interpreting and presenting historical experiences and lessons holds practical significance for present and future generations. A historical fact represents an undeniable truth from the past that must not be subject to distortion or falsification. True history is built upon such historical facts.

History, as factual memory of the past, is preserved in diverse historical sources: written, oral (including narratives), material artifacts, and other documents. These sources can be classified as direct or indirect, primary or secondary in importance. Direct sources provide immediate coverage of events or phenomena in their temporal and spatial context, while indirect sources, though not directly connected to the events, can contribute valuable context and supporting information. Original sources generally offer the highest reliability and credibility.

Throughout history, various factors subjective, ideological, political, and class-based have led to distortions and falsifications of historical facts. Historical literature reveals that such falsifications have occurred across all countries and periods. Notably, the Soviet Union and its historiography in the 20th century exemplified systematic historical distortion in service of building a "communist

society." Our theoretical analysis draws primarily from episodes in Armenian history to illustrate these points.

A historian must possess various qualities and characteristics personal, professional, civic, and academic including proper education, professional expertise, a developed worldview, and understanding of environmental and social conditions. Without professional historians, true history cannot be documented. The historian must: rely exclusively on historical facts, maintain high scientific standards, demonstrate moral consciousness and impartiality, master historical theory and methodology, select appropriate research topics, thoroughly collect, study, and evaluate sources.

Based on these principles, historians must present authentic history through meaningful analysis, providing scientifically grounded and comprehensive conclusions. Their work should offer educational value and guidance for present and future generations. Finally, while maintaining commitment to historical accuracy, historians must balance professional objectivity with appropriate recognition of national identity, when relevant.

Резюме

СМЫСЛ И ЗНАЧЕНИЕ ИСТОРИЧЕСКОГО ФАКТА

В контексте когнитивных функций историка

Арарат М. Акопян

Доктор ист. наук

Ключевые слова - исторический факт, источник, историк, время, оценка, истина, 28 мая, научный подход, методология, Л. Ранке, И. Дройзен, М. Блок, ложь, позитивизм, фактор.

В исторической науке как значение исторического факта, так и роль историка являются важнейшими элементами, без которых невозможно существование обоснованной, достоверной истории. Без исторических фактов история, по существу, отсутствует. Исторический факт приобретает своё значение, когда демонстрирует причинно-следственные связи с другими фактами во времени и пространстве. Посредством систематического и логического представления этих связей становится возможным освещение конкретных исторических событий или эпизодов, и в более широком смысле - построение обоснованного, содержательного и научно достоверного исторического повествования.

История как наука прежде всего изучает прошлое людей и обществ. Следовательно, интерпретация и представление исторического опыта и уроков истории имеет практическое значение для настоящего и будущих поколений. Исторический факт представляет собой неоспоримую истину прошлого, которая не должна подвергаться искажению или фальсификации. На таких исторических фактах строится подлинная история. В отличие от фактов в естественных науках, исторические факты являются также психологическими феноменами, включающими субъекты (людей) и общества, наделённые сознанием и волей. Это различие привело европейских философов истории, особенно представителей Баденской неокантианской школы и школы «Анналов», к резкой критике позитивистов, пытавшихся интерпретировать исторические события и явления через законы естественных наук.

История как факт и память о прошлом сохраняется в различных исторических источниках: письменных, устных (включая повествования), материальных артефактах и других документах. Эти источники можно классифицировать как прямые или косвенные, а по значимости как первичные или вторичные. Прямые источники обеспечивают непосредственное освещение событий или явлений в их временном и пространственном контексте, в то время как косвенные источники, хотя и не связанные напрямую с событиями, могут предоставить ценный контекст и вспомогательную информацию. Первичные источники, как правило, обладают наивысшей надёжностью и достоверностью.

На протяжении истории различные факторы – субъективные, идеологические, политические и классовые, приводили к искажениям и фальсификациям исторических фактов. Историческая литература свидетельствует, что такие фальсификации происходили во всех странах и во все времена. В частности, Советский Союз и его историография в XX веке являли собой пример систематического искажения истории в целях построения коммунистического общества.

Историк должен обладать определенными качествами и характеристиками - личностными, профессиональными, гражданскими и академическими - включая надлежащее образование, профессиональную компетентность, широкое мировоззрение и понимание условий окружающей среды и общества. Без профессиональных историков достоверная история не может быть задокументирована. Историк должен опираться исключительно на исторические факты, поддерживать высокие научные стандарты, демонстрировать беспристрастность, владеть теорией и методологией истории, выбирать соответствующие темы исследования, тщательно собирать, изучать и оценивать источники.

Основываясь на этих принципах, историки должны представлять реальную историю посредством содержательного анализа и всесторонне обоснованных выводов. Их работа должна иметь образовательную ценность и служить руко-

водством для настоящего и будущих поколений. Наконец, сохраняя приверженность исторической достоверности, историки должны уравновешивать профессиональную объективность надлежащим признанием национальной идентичности и характера, когда это уместно.

Օգտագործված գրականություն

1. **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թ., Եր., «Բարձրագույն դպրոց» հրատ., 1997, էջ 331:
2. **Գալոյան Գ.,** Հայաստանը և Մեծ տերությունները 1917–1923 թթ., Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 376:
3. **Դարբինյան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890 են 1940), Եր., հրատ. «Ազգ» օրաթերթի, 2003:
4. **Երզնկյան Ար.**, Ժողովրդական դատարանին, Թիֆլիս, 1927:
5. **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., «Ադանա» հրատ., 1991, էջ 263–264:
6. ԽՄԿԿ պատմություն, Եր., «Հայաստան» հրատ., 1981, էջ 296:
7. **Լեո**, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 1, Եր., «Պետ. հմալսարան» հրատ., 1926, էջ 162:
8. **Խատիսյան Ալ.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, Համազգային տպ., 1968, էջ 84:
9. **Խուդինյան Գ.**, **Հակոբյան Ա.**, ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Եր., ՀՅԴ հրատ., 2005, էջ 37–38:
10. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբ., **Վլ. Ղազախեցյան**, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:
11. **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցություն-ները (1918–1920), Եր., ՀՅԴ հրատ., 2005:
12. **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 64–79:
13. **Հակոբյան Ա.**, Հայոց պատմություն, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2022:
14. **Հակոբյան Ա.**, Արևելյան Հայաստան՝ Ռուսաստանին միացման հիմնահարցի պատմագիտական գնահատականը խորհրդահայ պատմագրության մեջ (այդ մասին տե՛ս՝ «Պատմաբանասիրական Հանդես», Եր., «Գիտություն» հրատ., 2023, N 3:
15. **Հակոբյան Ա.**, Պետականության վերականգնման գաղափարը Հայոց պատմության հոլովույթում (XVI դ. կեսեր–XXդ. սկիզբ), Եր., «Գիտություն» հրատ., 2024, էջ 403:
16. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող և խմբ., **Հ. Սուքիասյան**, Եր., Հայկարլի ՍՊԸ տպ., 2009:
17. «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), խմբ., պրոֆ. **Ջ. Կիրակոսյան**, Եր., «Հայաստան» հրատ., 1972:
18. «**Առավոտ**», 12 մայիսի 2001 թ., 1 սեպտեմբերի 2001 թ.:
19. «**Հայկական ժամանակ**», 1 սեպտեմբերի 2001 թ.:
20. **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1986, գիրք VII, գլ. 152:
21. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2, ֆ. 200, ց. 1, գ. 112, թ. 17:

22. **Մաշկին Ն**., Հին Հռոմի պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1951, էջ 23:
23. **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր. «Հայպետհրատ», 1961:
24. **Նիցշե Ֆրիդրիխ**, Երկեր, հինգ հատորով, հ. 2, թարգմ. **Հակոբ Մովսես**, Եր., «Անտարես», 2018, էջ 83:
25. **Խատիսեան Ալ**., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ,» Համազգային» տպ., 1968:
26.ՍՄԿՊ համագումարների, կոնֆերանսների և ԿԿ-ի պլենումների բանաձևերում ու որոշումներում, մաս 1, Եր., Հայաստանի պետ. հրատ., 1954:
27. **Վրացյան Ս**., Հայաստանի Հանրապետություն, Եր. «Հայաստան» հրատ., 1993, էջ 16:
28**. Белинский В. Г**., Избранные философские произведения, в 2-х т., М., изд. «Академий наук», 1948, т. I.
29. **Биск И. Я**., Методология истории: курс лекции, Иваного, изд. «Ив. гос. ун-т», 2007.
30**. Блок Марк**, Апология истории или ремесло историка, перевод Лысенко Е. М., М., изд. «Наука», 1973.
31**. Блок М**., Апология истории или ремесло историка, изд. 2-е, М., изд. «Наука», 198632. Большая Советская Энциклопедия (БСЭ), 3-е изд. М., 1975, т. 21.
33. «Дело партии Дашнакцутюн», тт. 1-6, (Այդ մասին տե՛ս ՀԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, ակադ. Ա. Կարինյանի անձնական ֆոնդ),
34**. Вайнштейн О. Л**., Историография средних веков, М.-Л., «Гос. издать», 1940.
35**.Виндельбранд В**., История и естествознание, СПб, изд. Жуковского, 1904**.**
36.**Гуревич А. Я**. Что такое исторический факт? М., 1969, «Наука», с. 82.
37.«Источниковедение. теоретические и методологические проблемы», М., «Наука», 1969**.**
38**.Дройзен Иоганн**, История эллинизма, т. I, Ростов-на-дону, изд. «Феникс», 1995**.**
39**.Дройзен И. Г**., Историка. Лекции об энциклопедии и методологии истории, СПб, 2004**.**
40**.Ключников Ю. В**. и **Сабанин А. В**., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, выпуск 2, М., «Полит. изд.), », 1929.
41**.Коллингвуд Р. Дж**., Идея истории. Автобиография, пер. **Ю. А. Асеева**, М., изд. «Наука», 1980**.**
42**.Конт Огюст**, Дух позитивной философии (слово о положительном мышлении), перевод **И. А. Шапиро**, СПб., изд. «Вестника Знания», 1910.
43**. Ланглуа Ш. В., Сеньобос Ш**., Введение в изучение истории, пер. с фр. **А. Серебряковой**, 2-е изд., М., «Гос. изд.», 2004**.**
44**.Ленин В. И**., Полное собрание сочинений (ПСС), 5-е изд., М., «Политиздат», 1980, т. 24, М., 1980, т. 25, с. 256. (646 с.), М., 1980, т. 27, с. 440.
45**. Мейер Эд.**, Теоретические и методологические вопросы истории, пер. **А. А. Малинин**, 2-е изд., М., тип. Г. Лисснера и Д. Совко, 191145. Огюст Конт и позитивизм. Стати Д. Милля, Г. Спенсера и Л. Уорда, перевод Н. Спиридонова, М., изд. «Книжное дело», 1897.
46. **Полибий**, Всеобщая история в сорока книгах (перевод с греческого **Ф. Г. Мищенко**), т. I, кн. I-V, М., изд. **А. Кузнецова**, 1890, т. II, кн. VI-XXV, М., 1895, т. III, кн. XXVI-XL, М., 1899 с.47**.**
47.**Ранке Л. Ф**., Собрании трудов, т. 33, М., 1874.
48**. Риккерт Г**., Границы естественно-научного образования понятий, перевод **А. Водена,** СПб, изд. Е. Кусковой, 1904 с**.** 49**.**
49**. Русина Ю. А**., Методология источниковедения, Екатеринбург, изд. «Уральский .университет», 2015**.**
50.**Февр Люсьен**, Бои за историю, М., изд., «Наука», 1991.

51. «Философская энциклопедия», т. 4, М., изд. «Сов. энциклопедия», 1967.
52. **Фукидид**, История, отв. ред**. Я. Боровский**, кн. I, гл. 22, Ленинград, изд. «Наука», 1981,
53.https://pikabu.ru/story/razdelenie_nauk_po_ikh_metodu_na_nomoteticheskie_i_ideograficheskie_po_vilgelmu_vindelbandu_7739878 ետև՝ dzen.ru/a/X2/rueyrAKFjOXodx (դիտում՝ 24.11.24 թ.).

REFERENCES

1. **Avetisyan H**., Haykakan harts'y 1918 t'., Yer., "Bardzraguyn dprots'" hrat., 1997 (**In Armenian**).
2. **Fevr Lyus'yen**, Boi za istoriyu, M., izd., «Nauka», 1991 (**In Russian**).
3. **Galoyan G**., Hayastany yev Mets terut'yunnery 1917-1923 t't'., Yer., «Gitut'yun» hrat., 1999 (**In Armenian**).
4. **Darbinyan A**., Hay azatagrakan sharzhman oreren (Yusher 1890 yen 1940), Yer., hrat. «Azg» orat'ert'i, 2003 (**In Armenian**).
5. **Yerznkyan Ar**., Zhoghovrdakan dataranin, T'iflis, 1927 (**In Armenian**).
5. **Lazean G**., Hayastan yev Hay Daty, Yer., "Adana" hrat., 1991, ej 263-264 (**In Armenian**).
6. KHMKK patmut'yun, Yer., «Hayastan» hrat., 1981(**In Armenian**).
7. **Leo**, Hayots' patmut'yun, noraguyn shrjan, mas 1, Yer., "Pet. hmalsaran" hrat., 1926 (**In Armenian**).
8. **Khatisyan Al**., Hayastani Hanrapetut'yan tsagumn u zargats'umy, Beyrut', Hamazgayin tp., 1968 (**In Armenian**).
9. **Khudinyan G**., Hakobyan A., HY Dashnakts'ut'yan patmut'yan kheghat'yurman verjin p'vordzery, Yer., HYD hrat., 2005 (**In Armenian**).
10. Hayastani Hanrapetut'yuny 1918-1920 t't'., (P'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu), pat. khmb., **Ghazakhets'yan V.**, Yer., HH GAA «Gitut'yun» hrat., 2000 (**In Armenian**).
11. **Hakobyan A.,** Hayastani khorhrdarany yev k'aghak'akan kusakts'ut'yunnery (1918-1920 t't'.), Yer., HYD hrat., 2005 (**In Armenian**).
12. **Hakobyan A**., Khorhrdayin Hayastany Moskvayi yev Karsi paymanagrerum, Yer., "Gitut'yun" hrat., 2010 (**In Armenian**)
13. **Hakobyan A**., Hayots' patmut'yun, Yer., "Tntesaget". hrat., 2022 (**In Armenian**).
14. **Hakobyan A**., Arevelyan Hayastan, Rrusastanin miats'man himnaharts'i patmagitakan gnahatakany khorhrdahay patmagrut'yan mej (ayd masin teʹs, "Patmabanasirakan Handes", Yer., "Gitut'yun" hrat., 2023, N 3 (**In Armenian**).
15. **Hakobyan A**., Petakanut'yan verakangnman gaghap'ary Hayots' patmut'yan holovuyt'um (XVI d. keser-XXd. skizb), Yer., "Gitut'yun" hrat., 2024).(**In Armenian**).
16. Hayastani ankakhut'yan hrrch'akumy yev ishkhanut'yan kentronakan marminneri dzevavorumy (1918 t'. mayis-hulis), p'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu, kazmogh yev khmb., **H. Suk'iasyan**, Yer., Haykarli SPY tp., 2009 (**In Armenian**).
17. Hayastany mijazgayin divanagitut'yan yev sovetakan artak'in k'aghak'akanut'yan p'astat'ght'erum (1828-1923), khmb., prof. **J. Kirakosyan**, Yer., "Hayastan" hrat., 1972 (**In Armenian**).

18. “Arravot”, 12 mayisi 2001 t’., 1 septemberi 2001 t’. (**In Armenian**).
19. “Haykakan zhamanak”, 1 septemberi 2001 t’. (**In Armenian**).
20. **Herodotos**, Patmut’yun iny grk’its’, Yer., Hayk. SSH GA hrat., 1986, girk’ VII (**In Armenian**).
21. HAA, f. 199, ts’. 1, g. 10, t’. 2, f. 200, ts’. 1, g. 112, t’. 17: (**In Armenian**).
22. **Mashkin N**., Hin Hrromi patmut’yun, Yer., YePH hrat., 1951 (**In Armenian**).
23. **Movses Khorenats’i**, Hayots’ patmut’yun, Yer. “Haypethrat”, 1961(**In Armenian**).
24. **Nits’she Fridrikh**, Yerker, hing hatorov, h. 2, t’argm. Hakob Movses, Yer., “Antares”, 2018 (**In Armenian**).
25. **Khatisean Al**., Hayastani Hanrapetut’ean tsagumn u zargats’umy, Peyrut’, “Hamazgayin” tp., 1968 (**In Armenian**).
26. SMKP hamagumarneri, konferansneri yev KK-i plenumneri banadzeverum u voroshumnerum, mas 1, Yer., Hayastani pet. hrat., 1954 (**In Armenian**).
27. **Vrats’yan S**., Hayastani Hanrapetut’yun, Yer. “Hayastan” hrat., 1993(In Armenian).
28. **Belinskiy V. G**., Izbrannyye filosofskiye proizvedeniya, v 2-kh t., M., izd. “Akademiya nauk”, 1948, t. I (**In Russian**).
29. **Bisk I. YA**., Metodologiya istorii: kurs lektsii, Ivanogo, izd. “Iv. gos. un-t”, 2007(In Russian).
30. **Blok Mark**, Apologiya istorii ili remeslo istorika, perevod Lysenko Ye. M., M., izd. “Nauka”, 1973, s. 114 (**In Russian**).
31. **Blok M**., Apologiya istorii ili remeslo istorika, izd. 2-y, M., izd. “Nauka”, 1986, (256 s.) (**In Russian**).
32. Bol'shaya Sovetskaya Entsiklopediya (BSE), 3-ye izd. M., 1975, t. 1, s. 21, s. 459 (**In Russian**).
33. «Delo partii Dashnaktsutyun», t.t.1-6. (HAA patmut’yan instituti arkhiv, akad. A. karinyani andznakan fond) (**In Russian**).
34. **Vaynshteyn O. L.,** Istoriografiya srednikh vekov, M.-L., «Gosudarstvo. opublikovat'», 1940, s. 51. (**In Russian**).
35. **Vindel'brand V**., Istoriya i yestestvoznaniye, SPb, izd. Zhukovskiy, 1904, s. 320. (**In Russian**).
36. **Gurevich A. YA**. Chto takoye istoricheskiy fakt? M., 1969, s. 82 (kurs “Istochnikovedeniye. teoreticheskiye i metodologicheskiye problem”, M., 1969. (**In Russian**).
37. **Droyzen Iogann**, Istoriya ellinizma, t. 1, s. YA, Rostov-na-donu, izd. “Feniks”, 1995, s. 602 (**In Russian**).
38. **Droyzen I. G**., Istorika. Lektsii ob entsiklopedii i metodologii istorii, SPb, 2004, s.77. (**In Russian**).
39. **Fevr Lyus'yen**, Boi za istoriyu, M., izd., “Nauka”, 1991, (**In Russian**).
40. **Klyuchnikov YU. V. i Sabanin A. V.,** Mezhdunarodnaya politika noveyshego vremeni v dogovorakh, notakh i deklaratsiyakh, gl. III, vypusk 2, M., 1929. (**In Russian**).
41. **Kollingvud R**. Dzh., Ideya istorii. Avtobiografiya, per. YU. A. Aseyeva, M., izd. “Nauka”, 1980 (**In Russian**).
42. **Kont Ogyust**, Dukh pozitivnoy filosofii (slovo o polozhitel'nom myshlenii), perevod I. A. Shapiro, SPb., izd. “Vestnika Znaniya”, 1910 (76 s.). (**In Russian**).

43. **Langlua SH. V.,** Sen'obos SH., Vvedeniye v izucheniye istorii, per. s fr. A. Serebryakovoy, 2-ye izd., M., “Gos. izd.”, 2004, s. 49. (305 s.). (**In Russian**)
44. **Lenin V. I**., Polnoye sobraniye sochineniy (PSS), 5-ye izd., M., “Politizdat”, 1980, t. 2, s. 24, s. 248, M., 1980, t. 25, s. 256. (646 s.), M., 1980, t. 256. (646 s.), M., 1980, t. 256. 27, s. 440. (643 s.). (**In Russian**).
45. **Meyyer Ed.,** Teoreticheskiye i metodologicheskiye voprosy istorii, per. A. A. Malinin, 2-ye izd., M., tip. G. Lissnera i D. Sovko, 1911, s. 47. (**In Russian**).
46. **Polibiy**, Vseobshchaya istoriya v soroka knigakh (perevod s grecheskogo F. G. Mishchenko), t. I, kn. I-V, M., izd. A. Kuznetsova, 1890, (s. 680), t. II, kn. VI-XXV, M., 1895, (s.805), t. III, kn. XXVI-XL, M., 1899, (s. 785). (**In Russian**).
47. Ogyust Kont i pozitivizm. Stati D. Millya, G. Spensera i L. Uorda, perevod N. Spiridonova M., izd. «Knizhnoye delo», 1897, (331 s.). (**In Russian**).
48. **Ranke L**. F., Sobraniya truda, t. 33, M., 1874, (**In Russian**).
49**. Rikkert G**., Granitsy yestestvenno-nauchnogo obrazovaniya ponyatiy, perevod A. Vodena, SPb, izd. Ye. Kuskovoy, 1904, (615 s.). (**In Russian**)
50. **Rusina YU. A**., Metodika istochnikovedeniya, Yekaterinburg, izd. «Ural'skiy universitet», 2015 (**In Russian**).
51.«Filosofskaya entsiklopediya», t. 1, s. 4, M., izd. “Sov. Entsiklopediya”, 1967 (**In Russian**).
52. **Fukidid**, Istoriya, otv. red. YA. Borovskiy, kn. I, gl. 22, Leningrad, izd. “Nauka”, 1981. (In Russian)53.https://pikabu.ru/story/razdelenie_nauk_po_ikh_metodu_na_nomoteticheskie_i_ideograficheskie_po_vilgelmu_vindelbandu_7739878, dzen.ru/a/X2/rueyrAKFjOXodx (**In Armenian**).